

Գուրգեն Միքայելյան

ԱՄԵՐԻԿԱՆ ԽԱՌՆԱՇՓՈԹ*

Կատակերգություն երկու գործողությամբ

**Ինչո՞ւ ամերիկյան: Ինչո՞ւ ոչ թե Կարեն, Գրիգոր, Շահեն, այլ Զեկ, Զոնի, Մարկ... Ասեմ միանգամից. ոչ թե ամերիկյան մակարդակ «ապահովելու» համար, այլ որովհետև սա հայկական միջավայրին բնորոշ, հայկական միջավայրում «կատարվող» կատակերգություն է: Այս ամենը եթե ներկայացվի որպես մեր կողքին կատարվող, կթվա շինծու, կանցնի թատերայնությանը բնորոշ «արհեստականության» սահմանը: Վերջին հաշվով, խոսքը այստեղ ոչ թե ամերիկացու, եվրոպացու կամ ասիացու մասին է, այլ, պարզապես, մարդու...*

Գործող անձինք

Ջեյ Հարդի — բանկերի ընկերության նախագահ
Ջոնի Ջեքսոն — Ջեյ Հարդիի նմանակը
Քիմ Հարդի — Ջեյ Հարդիի կինը
Տոտի Հարդի — Ջեյ Հարդիի որդին (5-6 տարեկան)
Քեթրին — Հարդիի տան սպասուհին
Մարի Հադսոն — Հարդիի սիրուհին
Էմմա Սմիթ — Հարդիի քարտուղարուհին, բավական տգեղ կին
Սառա Փիթ — ընկերության աշխատակցուհի
Էդի Մոմսեն
Սթիվ
Մարկ
Մայքլ

Գործողություն առաջին

Բանկերի ընկերության նախագահ Ջեյ Հարդիի աշխատասենյակը: Հարդին՝ միջին տարիքի սևամորթ տղամարդ, գրասեղանի մոտ նստած՝ աշխատում է: Ներս է մտնում Սառա Փիթը՝ ձեռքին թղթապանակ:

ՍԱՌԱ— Օ՛, միստր Հարդի, որքա՛ն պայծառ տեսք ունեք այսօր, որքան լուսավո՛ր...
ՀԱՐԴԻ— (Շողոքորթությունն անմիջապես զգալով) Նկատի ունես «լուսավոր» հաստի՞քը,
Փիթ:
ՍԱՌԱ— Ո՛չ, ո՛չ, միստր Հարդի: Ձեր տեսքն այսօր իսկապես շքեղ է, լուս... (զգալով ասածի անհեթեթությունը) եղ... եղ... ե՛ն...
ՀԱՐԴԻ— (Սև ձեռքերին նայելով) Այո՛... Լուսեղեն... (Հեզմանքով) Ինչպես որ լուսնկա գիշերը...
ՍԱՌԱ— (Հարդիին մոտենալով՝ փորձում է հնարավորինս գայթակղել): Ստորագրեք այստեղ, խնդրում եմ... Այստեղ... Այստեղ: (Բռնում է Հարդիի ձեռքը, նայում աչքերին և խոսում հուզված կնոջ տոնայնությամբ, բայց դերասանաբար): Դուք կատարյալ տղամարդ եք, միստր...
ՀԱՐԴԻ— (Նույնպես կեղծ տոնայնությամբ) Իսկապե՞ս, Սառա... (Վերջինս, իբր ցանկությանը չդիմանալով, ընկնում է նրա գիրկը):
ՍԱՌԱ— Օ՛, Հարդի...

Ներս է մտնում Էմմա Սմիթը և այնպես հանգիստ մոտենում Հարդիի աշխատասեղանին, կարծես սենյակում սովորական աշխատանքային մթնոլորտ է:

ԷՄՄԱ— (Սեղանին թղթապանակ դնելով) Դիտարկման փաստաթղթերն են, միստր:
ՍԱՌԱ— (Հարդիի գրկից հանգիստ բարձրանալով՝ թշնամանքով նայում է Էմմային): Դիտարկման փաստաթղթերը...
ԷՄՄԱ — Այո՛, Սառա, դիտարկման:
ՍԱՌԱ — Լավ բան չէ, Էմմա՛, դիտարկում անցկացնել դռան հետևից:
ԷՄՄԱ — Առավել ևս՝ անմիջապես նետվել թափուր հաստիքի վրա...
ՀԱՐԴԻ— Դե՛, դե՛...
ԷՄՄԱ— Այսուհանդերձ, Սառա Փիթ, բնավ համոզիչ չէր... (Դուրս է գալիս):
ՍԱՌԱ— (Նրա հետևից) Հրեղեն փերի, որ միշտ կպարծենա իր կուսությամբ... Դուք որտե՞ղ եք գտել այս գեղեցկուհուն, միստր:
ՀԱՐԴԻ— Ես չեմ գտել: Գտել է կինս: Իմ քարտուղարուհիներին նա է ընտրում: Սա արդեն երրորդն է:
ՍԱՌԱ— Որքա՛ն մոլեգին խանդ: Ասում են, որ այսպիսիներին եթե աշխատանքի չեն ընդունում, ուրեմն պատճառն արտաքինն է: Իսկ եթե ընդունել են, ուրեմն... կրկին արտաքինն է, որովհետև դրանով ցանկացել են ինչ-որ բան թաքցնել... Ի դեպ՝ միստր Հարդի, այսօր

սենյակներում տարօրինակ լուրեր են շրջում: (*Հարդին նայում է նրան*): Ասում են, թե հերթապահն այս գիշեր տեսել է մի ուրվական:

ՀԱՐԴԻ— Հնարավոր է. հալյուցինացիա...

ՍԱՌԱ— Եվ այնուամենայն էլ, որ նա եղել է ճիշտ ու ճիշտ... Ձեզ նման: «Տեսել եմ անձամբ,- ասում է,- դա ուրվականն էր միստր Հարդի»:

ՀԱՐԴԻ— Եվ նա կեսգիշերին, ինչպես հանգուցյալ հայրը Համլետի, դուրս է եկել գերեզմանից և ահագոյն խորհրդավորությամբ քայլել:

ՍԱՌԱ— Ո՛չ: Դուրս է եկել զուգարանից ու արագ փախել... (*Հարդին խեթ նայում է Սառային*): Երդվում է:

ՀԱՐԴԻ— Ա՛խ, ուրեմն նա արդեն մամուլի ասուլիս է տալիս:

ՍԱՌԱ— Նման մի բան, բայց հոգեբույժների մոտ... Նա վախից ցնորվել է:

ՀԱՐԴԻ— Պարզ է, պարզ է:

ՍԱՌԱ— Այսպիսի բաներ, միստր: (*Բերած փաստաթղթերը վերցնելով*) Դե, ես գնացի: Ես հիմա ոչ մի բան ժամանակ չունեմ այդ թափուր հաստիքի պատճառով: Մտածեք, միստր... Եվ նկատի ունեցե՛ք, որ ես արդեն միայնակ կիմ եմ: Այլ կերպ ասած՝ նույնպես թափուր հաստիք... (*Գնում է*):

ՀԱՐԴԻ— (*Աթոռի թիկնակին հոգնած հենվելով*) Օ՛ֆ... Սառա՛, Էմմա՛, Մարի՛...

Հետին դռնից գալիս են Էդին և Սթիվը՝ բերելով անվավոր մի արկղ:

ԷԴԻ— Ձեզ համար մենք մեծ անակնկալ ունենք, միստր:

ՍԹԻՎ— Նվե՛ր:

ԷԴԻ— Տեսնե՛ք իսկ, չե՞ք հավատա:

ՀԱՐԴԻ— (*Հետաքրքրությամբ*) Եվ որտե՞ղ է այն:

ԷԴԻ— (*Արկղը ցույց տալով*) Այստեղ, ահա:

ՍԹԻՎ— Ձեր երազանքը... Գիշերն ենք բերել, գաղտնի: Թաքցրել էինք, որ ոչ ոք չտեսնի: (*Սկսում են արկղը բացել*):

ԷԴԻ— Դուք հիմա պարզապես ապշելու եք:

Սթիվը կափարիչը դնում է մի կողմ, և բոլորն ուշադրությամբ նայում են արկղին... Սեկերկու վայրկյան անց գլուխը դանդաղ բարձրացնում ու զարնացած, հետաքրքրական հայացքով շուրջբոլորն է նայում մի տղամարդ, որը խիստ նման է Հարդիին: Մի պահ տիրում է լռություն:

ՍԹԻՎ— Դուրս եկ, Ջոնի: Մի՛ վախեցիր:

ՀԱՐԴԻ— (*Ապշած*): Ախ, ուրեմն դա ճի՞շտ է... Ուրեմն դուք... բռնե՞լ եք նրան...

ԷԴԻ— Գտել ենք, միստր: Բոլորովին պատահաբար:

ՍԹԻՎ— Տեսանք թե չէ, անմիջապես մտածեցինք, որ Ձեզ համար կլինի լավ նվեր:

ԷԴԻ— Ընդամենը մի քիչ վրան աշխատել ենք, մշակել:

ՀԱՐԴԻ— (*Ուշքի չեկած*) Իսկ սա ի՞նչ է. խամաճի՞կ, ուրվակա՞ն...

ՍԹԻՎ— Սա Ձեր... նմանակն է, միստր: (*Ջեքսոնը արկղից դուրս է գալիս և անմիջապես դիմում Հարդիին: Խոսում է արագ-արագ*):

Ջեքսոն— Միստր, միստր, օգնեցե՛ք ինձ: Սրանք գիժ են, ավագակ: Ինձ առևանգել են: Տեսե՛ք, թե ինչ են հագցրել: (*Տարօրինակ հայացքով նայում է Հարդիին, որն իրենից ոչնչով չի տարբերվում: Մատն ուղղում է նրա կողմը*): Միստր...

ԷԴԻ— Հարդի՛:

Ջեքսոն— (*Կրկնում է*): Միստր Հարդի...

ՍԹԻՎ— (*Մատնացույց է անում Ջեքսոնին*) Միստր...

Ջեքսոն— Ջեքսոն...

ԷԴԻ— Ո՛չ: Ասացինք՝ դու այլևս Ջեքսոնը չես:

ՍԹԻՎ— Այսուհետև դու կոչվելու ես Հարդի:

Ջեքսոն— (*Հարդիին*) Միստր... Միստր... Փրկե՛ք ինձ: Սրանք գիժ են: Կատարյալ գիժ... Բոլորը գիտեն, որ ես Ջեքսոնն եմ, Ջոնին, իսկ սրանք ասում են Հարդի: Ես շրջմոլիկ եմ: Ջանգեք ուստիկանություն, միստր...

ԷԴԻ— Մենք քեզանից, Ջոնի, սարքելու ենք Հարդի, Միստր Հարդի...

ԶԵՔՍՈՆ— *(Վախեցած)* Ի՞նչ... *(Վազում, վերցնում է բազմաթիվ հեռախոսներից մեկի լսափողը, սեղմում կոճակները և արագ-արագ խոսում)*: Ալո՛, ալո՛, ոստիկանություն: Ինձ արևանգել են, ինձ սպառնում են: Ինձնից ուզում են Հարդի սարքել: Երդվում են. ես Ջոնին եմ: *(Էդին և Սթիվը նայում են Հարդիին՝ սպասելով հրահանգի)*:

ՀԱՐԴԻ— Այդ հեռախոսը չի աշխատում:

ՍԹԻՎ— Մի՛ անհանգստացիր, Ջոնի: Քեզ ոչ մի վտանգ չի սպառնում: Դու հիմա կապրես ավելի լավ, ավելի հետաքրքիր կյանքով:

ԶԵՔՍՈՆ— Չի սպառնում վտանգ: Իսկ ինչի՞ համար էր *(արկղը ցույց տալով)* Նոյյան տապանով այս ուղևորությունը: *(Վազում է դռան կողմը և փորձում բախել)*: Հե՛յ, օգնեցե՛ք... Հե՛յ...

ԷԴԻ— *(Սթիվի հետ փորձում են արգելել)*: Հանգստացիր, Ջոնի: Ոչ ոք այստեղ քեզ չի լսի:

ԶԵՔՍՈՆ— Իսկ ինչո՞ւ չի լսի: Բոլորը խեղդվե՞լ են: Եվ որտե՞ղ է իմ տապանն իջել: Գուցե աղունի՞կ բաց թողնեն:

ՍԹԻՎ— Ջոնի՛...

Սթիվը չի հասցնում խոսքն ավարտել, քանի որ Ջոնին ճարպիկ շարժումով նրա և Էդիի ոտքերից քաշում, զցում է հատակին և գլուխները խփում իրար: Մինչ նրանք ուշքի կգան, հարձակվում է նաև Հարդիի վրա, զցում է արկղը, կափարիչը ամրացնում ու մտնում նրա դերի մեջ:

ԶԵՔՍՈՆ— *(Էդիին և Սթիվին)* Հաց չե՞ք կերել, ինչ է: *(Հարդին պոկում է կափարիչը և դուրս գալիս)*: Հապա կապոտեք սրան...

ԷԴԻ— *(Ջեքսոնին)* Ներեցեք, միստր Հարդի:

ՀԱՐԴԻ— Տխմա՛ր, ե՛ս եմ Հարդի:

ԶԵՔՍՈՆ— Ստում է: Հարդին ես եմ: *(Էդին և Սթիվը նայում են իրար՝ չկարողանալով կողմնորոշվել)*:

ՀԱՐԴԻ— Սա ապուշ ձևացող կատարյալ դերասան է, Էդի՛:

ԶԵՔՍՈՆ— *(Նույն տոնայնությամբ կրկնում է)*: Սա ապուշ ձևացող կատարյալ դերասան է:

ԷԴԻ— Հոգեբանական հատուկ մեթոդներով հնարավոր է մարդուն վերափոխել ամբողջովին, միստր: Ես խոստանում եմ...

Ջոնի, դու այսօրվանից կլինես ոչ թե Ջեքսոն, այլ հարդի: Միստր Հարդի:

ՍԹԻՎ— Որպես երբեմնի ոստիկան՝ կարող եմ ասել, միստր, որ ձեզ սատանան իսկ չի տարբերի:

ԷԴԻ— Հիշո՞ւմ եք, որքան էիք ցանկանում ունենալ մմանակ: Ահա՛, գտնվեց վերջապես:

ՍԹԻՎ— Տվյալները շատ հարմար են: Ճիշտ է, ուղեղը մի քիչ կաղում է, բայց «բուժել», թաքցնել հնարավոր է:

ԷԴԻ— Մեծացել է մանկատանը: Տուն չի ունեցել: Չի ամուսնացել: Մի ժամանակ աշխատել է ինչ-որ ընկերությունում, սակայն հաստիքների կրճատման պատճառով ազատվել է ու մնացել փողոցում:

ԶԵՔՍՈՆ— Մի գիշեր էլ՝ արկղում: Պատկերացնո՞ւմ եք՝ ինչ կլինեք, եթե չկարողանայի կափարիչը բացել ...

ԷԴԻ— Ի՞նչ: Ուրեմն դու...

ԶԵՔՍՈՆ— Այո: Ու քիչ մնաց, որ զուգարանում բռնեն: *(Հարդիին)*: Բաց թողեք ինձ, միստր: Խնդրում եմ:

ՀԱՐԴԻ— Ոչ, Ջոնի: Դա արդեն անհնարին է: Ես միշտ երազել եմ ունենալ քեզ մման մեկին: Դու այսուհետև Հարդի ես, միստր Հարդի...

Նոր պատկեր:

Էդին և Սթիվը Ջեքսոնին սովորեցնում են, թե ինչպես պետք է մմանակի Հարդիին:

ՍԹԻՎ— Թե ի՛նչ և ինչպես ես խոսելու Մարիի հետ, երևի արդեն պարզ է:

ԶԵՔՍՈՆ— *(Քունքը քորելով)*: Այո, սըր: Մի շաբաթ է՝ սերտում եմ:

ՍԹԻՎ— Միստրը ժամացույցին հաճախ նայելու սովորություն ունի: Դա նկատի ունեցիր:

ԷԴԻ— Նստած ժամանակ հաճախ ոտքը զցում է ոտքին և ճոճում: Փորձիր հապա: *(Ջեքսոնը փորձում է)*: Շատ կոպիտ է ստացվում: Շարժիր մի քիչ դանդաղ, հանգիստ...

ՍԹԻՎ— Լավ: Հետո էլի կփորձենք:

Էրի— Միստրը սովորություն ունի նաև մատներով սեղանի վրա տկտկացնելու:
 Ջեքսոն— Բանից պարզվում է, որ ձեր միստրը մենակ մի ամբողջ գնդի ժեստեր է անում:
 Սթիվ— Նա հաճախ ասում է ապուշ, հիմար: Եվ դա երբեմն ոչ թե վիրավորելու համար, այլ պարզապես, որպես կոչական:
 Էրի— Որպես հոգեբան՝ քեզ ասեմ, Ջոնի, որ հիմա բոլորը կարծում են, թե, իրենցից բացի, բոլորն ապուշ են:
 Սթիվ— Մարիին նա հաճախ ասում է փիսիկս, վագրիկս...
 Ջեքսոն— Գրողը տանի, իսկ ո՞ւմ վրա ենք պարպելու դերասանական այս ամբողջ գինանոցը:
 Էրի— Միստրը, հասկանո՞ւմ ես, չի կարող միաժամանակ լինել երկու տեղ: Բայց արի ու տես, որ դրա անհրաժեշտությունը խիստ է զգացվում: Եվ, ահա, նա որոշել է, որ այնտեղ, որտեղ իր ներկայությունը շատ կարևոր չէ, երբեմն կարելի է փոխարինել:
 Ջեքսոն— *(Դերի մեջ մտած՝ ոտքը գցում է ոտքին և սեղանին տկտկացնում):* Եվ որտե՞ղ նրա ներկայությունը շատ կարևոր չէ:
 Սթիվ— Գիտե՞ս, Ջոնի, երբեմն լինում են պաշտոնական ոչ կարևոր գործեր: Բացի այս՝ միստրը ունի և՛ կին, և՛ սիրուհի ու չի կարող միաժամանակ երկուսի մոտ լինել: Ահա այստեղ է, որ դու նրան պիտի օգնես:
 Ջեքսոն— *(Ապշահար) Ի՞նչ...*
 Էրի— Այնպես որ, քո աշխատանքն այնքան էլ շատ չէ:
 Ջեքսոն— *(«Դերը» փորձելով)* Ապո՛ւշ... Ուրեմն միստրը որոշել է, որ կնոջ ու սիրուհու մոտ իր ներկայությունը շատ էլ կարևոր չէ՞:
 Սթիվ— Այո՛: Միստրը այդպես է որոշել:
 Ջեքսոն— Մի խոսքով՝ ես լինելու եմ նրա սիրուհու սիրեկանը և կնոջ ամուսինը:
 Էրի— Հիմնականում՝ այո, պահելով, սակայն, մի շարք սահմանափակումներ:
 Սթիվ— Նրա կնոջ հետ դու երբեք չպիտի՛ քնես:
 Էրի— Չպիտի՛ նայես այն ժամանակ, երբ կսկսի հանվել:
 Ջեքսոն— Իսկ երբ կսկսի հագնվել...
 Սթիվ— Եվ ա՛յն ժամանակ, երբ կսկսի հագնվել:
 Էրի— Երբ նա ինքը կցանկանա սեր անել, պիտի որևէ պատրվակով հրաժարվես:
 Սթիվ— Պյուս-մինուս մի քիչ այս կողմ, այն կողմը՝ ոչինչ:
 Ջեքսոն— *(Դարձյալ ոտքը գցում է ոտքին և սեղանի վրա տկտկացնում):* Բայց ինչո՞վ է միստրը համոզված, որ դա հնարավոր է:
 Էրի— Հասկանո՞ւմ ես, Ջոնի, միստրը ստիպված է...
 Սթիվ— Նկատի ունեցիր. դու նրան փոխարինելու ես միայն ծայրահեղ դեպքերում: Կսկսենք կարճ հանդիպումներով: Շրջնոլիկից դու միանգամից դառնում ես միլիոնատեր: Միստրը մեծ գումարներ է խոստանում:
 Ջեքսոն— Միլիոնատե՛ր...
 Էրի— Գուցե արդեն փորձե՞նք մի հատված: Նախնական...
 Սթիվ— Չանգիր Մարիին: Ասա, որ մի քանի օրից կարճ ժամանակով, ասենք՝ կես ժամով, կլինես իր մոտ:
 Ջեքսոն— Կես ժամո՞վ... Այսինքն՝ կես ժամ... *(Սիրահետելու շարժումներ է անում):*
 Սթիվ— Այո՛, այո՛: Դու ե՞րբ ես վերջին անգամ կին սիրել: *(Ջեքսոնն առյուծի մռնչյուն է արձակում, բայց զգացվում է, որ չի համարձակվում զանգել):*
 Էրի— Մի՛ վախեցիր, դե... *(Համար է հավաքում և հեռախոսը մեկնում Ջեքսոնին):*
 Համարձակ խոսիր: Ինչպես միստրը:
 Սթիվ— *(Հուշում է, թե ինչ պիտի ասի)* Փիսիկս... վագրիկս... *(Լսվում է Մարիի ձայնը):*
 ՄԱՐԻ— Այո... *(Ջեքսոնը շփոթմունքից մնում է լուռ):* Դե, խոսիր, շլդիկս...
 Ջեքսոն— *(Էրիին և Սթիվին)* Ասում է՝ շլդիկս...
 Էրի— Ասա՛ փիսիկս...
 Ջեքսոն— Դու... դու... դո՞ւ ես, փիսիկս:
 ՄԱՐԻ— Դե էլ ո՞վ պիտի լինի, նապաստակա: Իսկ դու, ինչ է, ի՞նձ չես զանգել:
 Ջեքսոն— Ես... Ես Մարիին եմ զանգել...
 ՄԱՐԻ— Է՛, Հարդի՛, ճագարիկ, քո թեժ կրակից սև ծուխն է միայն մնացել...
 Ջեքսոն— Ի՞նչ:
 ՄԱՐԻ— Դու ոնց որ էլի նստել ես, հա՞, Ջեկ:

ԶԵՔՍՈՆ— Ո՛հ: Ես կանգնած եմ:
 ՄԱՐԻ— Իսկ մինչ ա՞յդ... Ասեղի ծայրի՞ն...
 ԶԵՔՍՈՆ— Ես... *(հրեն սկսում է տիրապետել)* պարզապես զանգեցի, Մարի՛, որ խոսեմ քեզ հետ...
 ՄԱՐԻ— Ընդամենը՝ խոսե՞լ: Իսկ ե՞րբ ես գալու:
 ԶԵՔՍՈՆ— Քո ծայնը լսելուց հետո ուզում եմ հենց հիմա վազել...
 ԷՂԻ— Հիմա, չէ: Հետո:
 ՄԱՐԻ— Օ՛, վերջապե՞ս, Զեկ:
 ՍԹԻՎ— Ասա, որ հետո ես գնալու: Մի քանի օրից:
 ՄԱՐԻ— Դու, ինչ է, մենակ չե՞ս:
 ԶԵՔՍՈՆ— Զէ, փիսիկս, մենակ չեմ, և ինձ ասում են, որ հիմա քեզ մոտ գալ չեմ կարող: Մի քանի օրից:
 ՄԱՐԻ— Այդ ո՞վ է սկսել քեզ կարգադրություններ անել:
 ԷՂԻ— Ապուշ... Հիմար...
 ԶԵՔՍՈՆ— *(Մեքենայաբար կրկնում է):* Ապուշ... Հիմար... *(Զգալով, որ սխալվեց)* Թո՛ւ...
 Ես դա հենց այնպես, Մարի, որպես կոչական ասացի: Այդպիսի սովորություն ունեն:
 ՍԹԻՎ— Ասա, որ մի քանի օրից կգնաս, և վերջացրու:
 ՄԱՐԻ— Այդ ո՞վ է ցուցումներ տալիս, Զեկ: Քեզ ի՞նչ է պատահել, որ մի տեսակ ես: Ինչո՞ւ մի քանի օրից և ոչ թե հիմա: *(Էղին և Սթիվը փորձում են կրկին ինչ-որ բան հուշել, բայց Ջոնին հասկացնում է, որ չմիջամտեն, և գրույցի թելը վերցնում է իր ձեռքը):*
 ԶԵՔՍՈՆ— Գիտե՞ս՝ բանն ինչ է, Մարի: Նրանք ինձ հետ պարապում են: Ասում են, որ ես դեռևս տարբերվում եմ իսկական Հարդիից: Ես փորձեր եմ անում, որ դառնամ իսկական Հարդին: Լսո՞ւմ ես...
 ՄԱՐԻ— Ի՞նչ... *(Ծիծաղում է):* Օ՛, իմ հանգած հրաբուխ: Ուրեմն դու նորից ուզում ես դառնալ իսկական Հարդի՞ն:
 ԶԵՔՍՈՆ— Հա՛, գժի պես: *(Կրկին մռնչում է):*
 ՄԱՐԻ— *(Ծիծաղելով)* Զե՛կ, նապաստակս, դու այսօր հաբեր հո չե՞ս ընդունել:
 ԶԵՔՍՈՆ— Հաբե՞ր: Ո՛հ: Ես ամեն օր արդեն դուշ եմ ընդունում ու վարժություններ անում:
 ՄԱՐԻ— Ի՞նչ վարժություններ, խենթո՞ւկ:
 ՍԹԻՎ— Դասական գիժ...
 ԷՂԻ— Ապու՛շ...
 ԶԵՔՍՈՆ— Դասական, գժական...
 ՄԱՐԻ— Եվ ի՞նչ... Ստացվո՞ւմ է: Դու երևի հատուկ սարքերի վրա ես պարապում, հա՞:
 Ունիվեր, գլխիվայր...
 ԶԵՔՍՈՆ— Զէ, դեռևս ինչ-որ բաներ եմ կրկնում, ոտքս զցում ոտքիս ու մատներով տկտկացնում: *(Մարին ծիծաղում է):* Ուրեմն դեռ պիտի սովորեմ նաև գլխիվայր շրջվե՞լ: *(Սթիվին և Էղինն նայելով)* Բանից պարզվում է, որ ես ոչ թե ֆինանսիստ եմ, այլ ծաղրածո՞ւ...
 ՍԹԻՎ— Այսօր բավական է: Ասա, որ հետո էլի կզանգես ու վերջացրու:
 ԶԵՔՍՈՆ— Այսօր բավական է: Հետո էլի կզանգեմ:
 ԷՂԻ— *(Հուշում է):* Գուրբայ:
 ԶԵՔՍՈՆ— Գուրբայ, վագրիկս:
 ՄԱՐԻ— Ցտեսություն, նապաստակ: Բայց այսօր դու մի տեսակ ավելի լավն էիր, Զեկ...
 Համբուրում եմ:

Ջեքսոնը խոսակցությունն ավարտում է: Էղին և Սթիվը, լարվածությունից թուլանալով, ազատ շունչ են քաշում:

ԶԵՔՍՈՆ— Ես միշտ ասել եմ, որ ճշմարտությունը հաճախ լինում է անհավատալի, իսկ սուտը՝ ավելի քան համոզիչ... *(Անդրավարտիքի փողքը բարձրացնում է ու ոտքը քրդում):*
 ՍԹԻՎ— Որպես սկիզբ՝ տանելի էր:
 ԷՂԻ— Եթե նկատի ունենանք վերջնական արդյունքը, նույնիսկ լավ էր, բայց դու քեզ պիտի լուրջ պահես, Ջոնի: Միստրը նման կատակներ չի անում:
 ՍԹԻՎ— Վաղը կարձ ժամանակով քեզ ուզում ենք, այսպես ասած, ներկայացնել նրա ընտանիքին: Ի՞նչ կասես:
 ԶԵՔՍՈՆ— *(Վախեցած)* Ի՞նձ...

Էրի— Մի՛ վախեցիր, Ջոնի: Մենք լինելու ենք քեզ հետ: Մտնելու ենք տուն և դուրս գանք: Որպես փորձ, քննություն: Հիշիր, որ դու արդեն ոչ թե Ջեքսոնն ես, այլ Հարդին: Քեզ ամենուր պիտի պահես այնպես, ինչպես իրեն պահում է Հարդին:

Սթիվ— Նկատի կունենաս, որ նրա կինը՝ Քիմ Հարդին, տնօրենն է օժանելիքի հայտնի ֆիրմայի:

Էրի— Միշտ հիշիր, թե ինչպես է Հարդին շարժվում, ինչ ժեստեր է անում, ինչ բառեր գործածում: *(Ջեքսոնը Հարդիի նման նայում է ժամացույցին...)*

Նոր պատկեր

Ջեկ Հարդիի բնակարանը: Ներս է մտնում սպասուհին՝ Քեթրինը:

Քեթրին— Տի-տո՛... Տիտո՛, որտե՞ղ ես... *(Նայում է սենյակի չորս կողմը):* Ա՛յ թե չարածին ես դու: Ես արդեն քո հայրիկին կրողոքեմ:

Լսվում է դռան զանգի ձայն: Քեթրինը գնում է բացելու: Տիտոն՝ ավտոմատը ձեռքին, բազկաթոռի հետևից դուրս է գալիս, աթոռը շրջելով՝ նրա հետևում դիրք բռնում և փողոն ուղղում դռան կողմը: Լսվում է Քեթրինի ձայնը:

Քեթրին— Օ՛, միստր Էրի, միստր Սթիվ, համեցեք: *(Հենց երևում են Էրին, Սթիվն ու Ջեքսոնը, Տիտոն ճայթռուկներ է նետում):*

Էրի— *(Փորձելով կատակի տալ)* Տիտո... Տիտո... Տե՛ս, մենք արդեն զոհվեցինք: Հերիք է, Տիտո...

Տիտո— Չե՛, դուք դեռ չեք մեռել: *(Կրակում է ավտոմատով, որի փողից «բոց» է դուրս գալիս: Ջեքսոնը սարսափահար ուզում է հետ դառնալ, բայց Սթիվը չի թողնում):*

Քեթրին— Ինչպե՞ս չես ամաչում, Տիտո: Չե՞ որ արդեն մեծ տղա ես...

Տիտո— Պարզե՛լ... *(Նետում է «նռնակ»): Ջեքսոնն անմիջապես պարզվում է):*

Սթիվ— Տեսնո՞ւմ ես, Տիտո, քո հայրիկն արդեն սպանված է:

Տիտո— Ձեռքներդ վե՛ր:

Էրի— Լավ, լավ, հանձնվում ենք: *(Ջեքսոնին հասկացնում է, որ «դերի» մեջ մտնելու ժամանակն է: Ջեքսոնը ցույց է տալիս, որ չգիտի ինչ անել: Քեթրինը, Տիտոյի գլուխը շոյելով, փորձում է նրան հանդգել, որ խաղը դադարեցնի):*

Քեթրին— Ինչ լավ տղա է, չե՞, Տիտո: *(Ջեքսոնը գնում, նստում է աթոռին, ոտքը զցում ոտքին և սեղանի վրա տկտկացնում):*

Տիտո— Ասում եմ՝ ձեռքներդ վե՛ր:

Ջեքսոն— Ապո՛ւշ... Հիմա՛ր... *(Մի պահ բոլորը զարմացած նայում են իրար: Ջեքսոնը ձայնն ավելի է բարձրացնում):* Հիմա՛ր... *(Ներս է մտնում Ջեկի կինը՝ Քիմ Հարդին):*

Քիմ— Ի՞նչ է այստեղ կատարվում:

Սթիվ— Տիկին Հարդի... Մենք պարզապես Տիտոյի հետ զվարճացանք: Բայց դու մեզ լավ վախեցրիր, չե՞, Տիտո: *(Ջեքսոնը դարձյալ չկողմնորոշվելով, թե ինչ պիտի անի, ավելի ցուցադրաբար է նայում ժամացույցին):*

Քիմ— Չե՞կ... Քեզ ի՞նչ է պատահել: Դու այսօր քեզ նման չես:

Ջեքսոն— *(Անակնկալի գալով)* Ի՞նչ... *(Էրիին ու Սթիվին)* Ասում էի, չե՞: *(Քիմին)* Այդ մասին դու ասա ոչ թե ինձ, այլ սրանց:

Էրի— Տիկին Հարդի, պարզապես միստրն այսօր անտրամադիր է:

Ջեքսոն— *(Էրիին)* Տեսա՞ք... Համոզվեցի՞ք... Ես ասում էի, իսկ դուք... *(Նրանց նմանակելով)* Փիսի՛կս, վագրի՛կս...

Քիմ— *(Զարմացած)* Չեմ հասկանում:

Սթիվ— Տիկին Հարդի, միստրն այսօր մի քիչ ընկճված է:

Տիտո— *(Մոտենալով Ջեքսոնին)* Հայրի՛կ, ինչո՞ւ ես ընկճված:

Ջեքսոն— *(Տիտոյի գլխին թեթևակի խփելով)* Որովհետև դու տխմար ու խելառ լակոտ ես: *(Տիտոն լացելով վազում է մոր մոտ):*

Էրի— Տիկին Հարդի, մենք միայն մի քանի թույլ... Պարզապես... Արդեն գնալու ժամն է: Միստրն ուշանում է: *(Ջեքսոնին)* Երևի արդեն գնա՞նք, միստր Հարդի:

Ջեքսոն— Միստր Հարդի՞... *(Հասկանալով, որ վիճակն այնքան էլ անհուսալի չէ):* Այո՛, Էրի՛, գնանք: *(Կրկին նայում է ժամացույցին):* Ես այսօր իրոք անտրամադիր եմ: Ինձ կներես, չե՞, Տիտո:

ՔԻՄ— Դու խնամ՞ծ ես, Ջեյ:

ՋեյՍՈՆ— Խնամ՞ծ: Այո՛, մի քիչ: Բայց դա ոչինչ: Կարևորն այն է, որ դու ինձ Ջեյ անվանեցիր: Կարևորն այն է, որ ես Ջեյն եմ, Ջեյ Հարդին: *(Լսվում է հեռախոսազանգ: Ջեյքսոնը, ինքնավստահություն ձեռք բերած, վերցնում է լսափողը):* Ջեյ Հարդին լսում է: *(Հանդիսատեսների համար լսելի է դառնում նաև զրուցակցի՝ Հարդիի ձայնը):*

ՀԱՐԴԻ— Ապո՛ւշ, այդ ես եմ Ջեյ Հարդին:

ՋեյՍՈՆ— *(Ներկաներին)* Լսո՞ւմ եք: Ասում է. «Ջեյ Հարդին ես եմ»: Եթե Ջեյ Հարդին դու ես, այդ դեպքում ո՞վ է օձանելիքների հանրահայտ ֆիրմայի տնօրեն Մարի Հարդիի ամուսինը:

ՀԱՐԴԻ— Դու կատարյալ գիժ ես... Դու վաղուց այդտեղ չափտի լինելի: Ինչո՞ւ ես այդտեղ:

ՋեյՍՈՆ— Որովհետև դուռն ակնապատված է: Չեմ կարող դուրս գալ:

ՀԱՐԴԻ— Ես քեզ հետ դեռ կխոսեմ, տխմա՛ր: Հաղորդիր Էդիին և Սթիվին, որ գան ինձ մոտ:

ՋեյՍՈՆ— Լսում եմ, միստր... *(Անմիջապես զգալով, որ սխալվել է):* Միստր... Հար... հիմա՛ր... *(Լսափողը դնում է):*

ՍԹԻՎ— *(Դադարից անմիջապես օգտվելով)* Դե ի՞նչ, գնա՞նք, Ջե... Ջե... Միստր Հարդի:

ՋեյՍՈՆ— Գնանք, Սթիվ: *(Հրամանատարի դեր ստանձնելով)* Հառա՛ջ...

ՏԻՏՆ— *(Ավտոնատը վերցնելով՝ կրակում է):* Հառա՛ջ...

Ջեյքսոնը, Էդին, Սթիվը և Տիտոն գնում են:

Նոր պատկեր:

Հարդիի մոտ են Էդին և Սթիվը:

ՍԹԻՎ— Չնայած որոշ անախորժություններին, որպես նախկին ոստիկան՝ կարող եմ ասել, որ փորձերն անցան հաջող:

ԷԴԻ— Կարևորն այն է, որ այդ ապուշն ընդունվեց որպես միստր Հարդի... *(Հարդին խեղճ նայում է Էդիին, և վերջինս անմիջապես զգում է սխալը):* Նկատի ունեմ, որ ֆիզիկապես դուք ընկալվեցիք որպես նույնը, միստր:

ՍԹԻՎ— Եվ քանի որ նա՝ որպես մարմին, նյութ, ընդունվել է, ուստի այդ նյութի վրա աշխատանքը պետք է շարունակել:

ԷԴԻ— Եվ, բացի այդ, միստր, գուցե իմ առաջարկը թվա անհեթեթ, այսուհանդերձ... *(Նայում է Հարդիին):* Այսուհանդերձ պիտի ասեմ, որ մենք մեր ուզած արդյունքին չենք հասնի, եթե չգնանք նաև հակառակ ուղղությամբ... Բանն այն է, որ որոշ հարցերում Ջոնիին անհնար է վերափոխել... Հասկանո՞ւմ եք, հարցն այն է, որ նա որոշ չափով... Դե, Դուք էլ գիտեք... Նա մի քիչ ապուշ է: Այլ կերպ ասած՝ նա իրեն երբեմն պահում է, այսպես ասած, ոչ խելացի...

ՀԱՐԴԻ— Եվ ի՞նչ, Էդի:

ԷԴԻ— Ասել կուզեմ, միստր, քանի որ անհնար է նրան դարձնել այնքան խելացի, այսինքն՝ այնպես չափած-ձևած, ուղիղ գծերով, ինչպիսին Դուք եք, ուստի ճիշտ կլինի, եթե... եթե մի փոքր էլ մենք աշխատենք Ձեզ վրա: Ասել կուզեմ, մի քիչ, մի փոքր ծռենք այդ գծերը... Չափ ու ձևը դարձնենք... դարձյալ չափ ու ձև, բայց մի քիչ խախտումով, աններդաշնակ: Մի խոսքով՝ միստր Հարդի, եթե մի փոքր էլ Դուք փորձեք դառնալ Ջեյքսոն... Այսինքն... Ներեցեք, մի նոր միստր, նոր միստր Հարդի, ամեն բան կլինի կատարյալ:

ՍԹԻՎ— Այո՛, միստր: Որպես նախկին ոստիկան՝ ասեմ, որ Մարին ավելի շատ հավանեց այդ նոր միստր Հարդիին:

ԷԴԻ— Հավատացեք, միստր, որ ձեր շրջապատը նույնպես կցանկանա տեսնել նոր Հարդի: Նույն անձից, հատկապես ուղիղ գծածից, չափած-ձևածից մարդիկ հոգնում են, ծանծրանում, և ձեզ նույնպես, հավատացեք, նոր կերպար է պետք: Այսպես ասած՝ վերափոխում, վերածնունդ:

ՀԱՐԴԻ— Լավ: Եվ ի՞նչ պիտի անեմ ես:

ՍԹԻՎ— Նմանվեք նրան, միստր Ջեյքսոնին...

ՀԱՐԴԻ— Ապո՛ւշ: Հիմա՛ր: *(Տեղից վեր է կենում և սկսում քայլել):*

ԷԴԻ— Մի՛ստր... Դուք այդ բառերը ճիշտ նրա տոնայնությամբ ասացիք:

ՍԹԻՎ— Գիտե՞ք, Ջոնին սովորություն ունի նաև երբեմն-երբեմն քունքը և ոտքը քորելու...

ՀԱՐԴԻ— Դուք գովե՛լ եք, Սթի՛վ: *(Նստում է, ոտքը զգում ոտքին և սեղանին տկտկացնում: Լարվածության պատճառով դա անում է սովորականից ուժեղ: Այնպես, ինչպես Ջեյքսոնը):*

ՍԹԻՎ— *(Զարմացած)* Միստր Հարդի... Ինձ թվում է, որ դուք իրար նմանվում եք արդեն ինքնըստինքյան:

Ներս է մտնում Սառա Փիթը՝ ձեռքին սպիտակ ծաղիկներ:

ՍԱՌԱ— Միստր Հարդի, շնորհավորում եմ... *(Ծաղիկները նրան մեկնելով)* Տեսեք, թե Ձեր արտաքինին որքա՞ն ներդաշնակ են:

ՀԱՐԴԻ— *(Ծաղիկները վերցնելով)* Այո՛, միսիս Փիթ... Ինչպես սև երկնքում՝ սպիտակ ասուպ... *(Քոնքը ցուցադրաբար քորելով)* Բայց ես չեմ կարողանում կռահել, թե շնորհավորելու ի՞նչ առիթ ունեմ:

ՍԱՌԱ— Ա՛խ, միստր Հարդի: Ինչպե՞ս եք մոռացել, որ ուղիղ հինգ տարի առաջ՝ այս օրը, երբ դեռևս թափուր էր այս հաստիքը, Դուք ստացաք այդ թափուր հաստիքին Ձեզ նշանակելու հրամանը:

Ներս է մտնում քարտուղարուհին՝ Էմմա Սմիթը, դարձյալ բերելով փաստաթղթերի տրցակ:

ԷՄՄԱ— Շտապ փաստաթղթեր են, միստր Հարդի, շատ շտապ... *(Փաստաթղթերը դնում է Հարդիի առաջ):*

ՍԱՌԱ— *(Խայթող տոնով)* Դիտարկման փաստաթղթերը, միստր: Ներքի՛ն... դիտարկմա՛ն...

ՀԱՐԴԻ— Ի՞նչ ես կարծում, Էդի, ի՞նչ կաներ Ջոնին այսպիսի դեպքերում:

ԷԴԻ— Նա հաստատ կաներ մի բան, ինչին ոչ ոք չէր սպասում: Հարկավոր է փորձել, շարունակել աշխատանքը:

ՀԱՐԴԻ— *(Ստորագրելով)* Դե... ուրեմն... շարունակեք... Էդի...

Մթնում է և լուսավորվում բավական ուշ, որ նշանակում է, թե անցել է որոշ ժամանակ:
Էդի, Սթիվ և Ջոնի:

ՍԹԻՎ— Երեք շաբաթ է՝ պարապում ենք: Դու պիտի իմանաս նրա կյանքի ողջ պատմությունը:

ՋԵՔՍՈՆ— Ուզում ես ասել՝ պատմության այն մասը, որը գիտեն նաև ուրիշներ՞ը:

ՍԹԻՎ— Թեկուզ և՛ այդպես...

ԷԴԻ— Այդ ամենը գիտեն միայն չորս հոգի. նա, մենք *(ցույց է տալիս իրեն և Սթիվին)* և դու: Եթե իմանա նաև հինգերորդը, ուրեմն մեզանից մեկը կպակասի, և կմնանք դարձյալ չորսով...

ՍԹԻՎ— Երեքով, Էդի, քանի որ այդ դեպքում չի մնա նաև հինգերորդը...

ՋԵՔՍՈՆ— Բայց սա ավելի շատ ինտրիգային գրքի նյութ է, քան կենսագրություն:

ԷԴԻ— Գրող դու այլևս չես դառնա, Ջոնի: Ուրեմն ավելի լավ է սերտես, թե ինչպե՛ս է պաշտոն ստացել միստր Հարդին: Ո՛վ է նրա համար Մարին: Ինչո՞ւ է ամուսնացել Քիմի հետ: Քանի՛ աշխատող կա ընկերությունում և այլև, և այլև: Պա՞րզ է:

ՋԵՔՍՈՆ— Էդի՛... Էդի Մոմսեն, բայց ես չեմ կարող դառնալ ուրիշի կյանքի հանրագիտարան:

ՍԹԻՎ— Դու չունես այլ ելք, Ջոնի:

ԷԴԻ— Ի դեպ՝ դու այսօր ունենալու ես սիրային հանդիպում Մարիի հետ... Նախանձելի՛ հանդիպում:

ՋԵՔՍՈՆ— *(Ժամացույցին ցուցադրաբար նայելով)* Գրողը տանի, բայց սա նաև հետաքրքիր է: Շա՛տ հետաքրքիր...

Նոր պատկեր:

Սառա Փիթը և Ջեկ Հարդին՝ վերջինիս աշխատասենյակում: Հարդին փաստաթղթեր է նայում, Սառան կանգնած է նրա մոտ:

ՍԱՌԱ— Հիշո՞ւմ ես, Ջեկ, երկու տարի առաջ մենք ի՛նչ անմոռաց ժամանակ անցկացրինք Լաս Վեգասում: Հրաշալի շաբաթ էր, չէ՞... *(Լսվում է Տիտոյի ավտոմատի ծայնը):*

ՏԻՏՈՒ— Ես ձեզ սպանելու եմ: Բոլորիդ սպանելու եմ... *(Նորից է կրակում):* Ձեռքերդ վե՛ր: Ասում եմ՝ ներս գնա: *(Ձեռքերը վեր պարզած, գերու դեր խաղալով՝ ներս է մտնում Էմման, հետևից՝ Տիտոն):*

ԷՄՄԱ— Ո՛չ, ո՛չ... Ինձ մի՛ սպանիր, ես մեղք եմ:

ՏԻՏՈՒ— Դու մեղք չես: Դու իմ գերին ես: Բոլորիդ խփելու եմ:

ԷՄՄԱ— Չէ՛, չէ՛, Տիտո, ինձ մի՛ խփիր:

ՍԱՌԱ— Օ՛, այս ինչ լավ բալիկ է:

ՏԻՏՈՒ— Ես բախկ չեմ: Ես գեներալ եմ: Բոլորիդ սպանելու եմ:
 ՍԱՌԱ— *(Նույնպես՝ խաղալով)* Օ՛, իմ գեներալ, ինձ խփիր: *(Զգացվում է, որ և՛ Սառան, և՛ Էմման այդ դերը խաղում են Հարդիին հաճոյանալու համար):*
 ՏԻՏՈՒ— Ես քեզ չեմ խփելու: Քեզ կախելու եմ:
 ԷՄՄԱ— Ինձ կախիր, Տիտո՛, ինձ:
 ՍԱՌԱ— Չէ՛, ավելի լավ է՝ ինձ կախես:
 ԷՄՄԱ— Դու մեջ մի՛ ընկիր: Տիտոն գիտի, թե ում կկախի: Չէ՞, Տիտո:
 ՏԻՏՈՒ— Ես բոլորի՛դ եմ կախելու:
 ՍԱՌԱ— Առաջինն ուրեմն ինձ կախիր, գեներալ Հարդի:
 ԷՄՄԱ— Ո՛չ: Գեներալ Հարդին որոշել է առաջինն ինձ կախել:
 ՏԻՏՈՒ— Բոլորիդ հերթով եմ կախելու: Ձեռքներդ վե՛ր: *(Սառան և Էմման ձեռքներն անմիջապես պարզում են վեր՝ նայելով Հարդիին):* Իրար հետևից՝ դեպի դուրս: Մեկ-երկու, մեկ-երկու...
 ԷՄՄԱ— *(Փորձելով կրկին գրավել Հարդիի ուշադրությունը)* Մնաս բարով, միստր Հարդի: Մնաս բարով...
 ՍԱՌԱ— *(Հրաժեշտ է տալիս ձեռքով):* Ջե՛կ...

Հարդին մնում է մենակ: Լսվում է հեռախոսազանգ: Վերցնում է լսափողը: Մի կողմում՝ լուսարձակի տակ, երևում է Սարին՝ բազկաթռչին նստած, մյուս կողմում՝ Հարդին:

ՀԱՐԴԻ— Ալո՛, փիսիկս:
 ՄԱՐԻ— Ինչպե՞ս ես, ցլիկ: Դեռ կարողանո՞ւմ ես:
 ՀԱՐԴԻ— Ի՞նչը, սիրելիս:
 ՄԱՐԻ— Դե, էլ ո՞րն է քո գործը. ստորագրե՛լ, հաշվե՛լ... Ես քեզ չափից շատ ուժասպառ հո չե՞մ արել:
 ՀԱՐԴԻ— Ի՞նչ ես ասում, աղունիկս:
 ՄԱՐԻ— Օ՛, Ջե՛կ, դու վաղուց այսպիսին չէիր եղել: Կարծես դա դու չլինեիր...
 ՀԱՐԴԻ— Ի՞նչ ես ասում:
 ՄԱՐԻ— Դու վերջապես արդարացրիր քեզ: Այսօր ոնց որ առյուծ լինեիր: Գլխիվայր... Ոտնիվեր... Պատկերացրու, որ գնացիր թե չէ, իսկույն կարոտեցի, ուզեցի կրկին հետդ խոսել: Կարծես ես մի նոր Ջեկ գտա ու նորից սիրահարվեցի:
 ՀԱՐԴԻ— Ի՞նչ... Մի նոր Ջե՞կ... Դա էր պակաս... Ես արդեն սկսեցի խանդել... այդ նոր Ջեկին:
 ՄԱՐԻ— *(Ծիծաղում է):* Օ՛, իմ գիժ... Դու որքան լավն ես, երբ գիժ ես: Այսօրվա նման...
 ՀԱՐԴԻ— Ու ես որքան սկսեցի հասկանալ, մարդիկ հիմա գժությունն ավելի են սիրում:
 ՄԱՐԻ— Վերջապես սկսեցիր հասկանալ, Ջեկ, Ջեկ Հարդի... Ե՞րբ ես նորից գալու, հա՞, սիրելիս: Միայն թե այս անգամ մի ամբողջ գիշեր: Ու ես այդ գիշերվա մթնում քեզ համար կդառնամ լույս...
 ՀԱՐԴԻ— *(Կտրուկ)* Վա՛ղը: Հենց վաղը գիշեր:
 ՄԱՐԻ— Ուրեմն՝ մինչ վաղը, իմ գիժ... Ընդունիր համբույրս: *(Համբուրում է լսափողը):*

Լույսերը մարում են:
Նոր պատկեր: Ջեկ Հարդիի բնակարանը: Տիտոն վազելով միջանցքից մտնում է սենյակ:

ՏԻՏՈՒ— Մայրի՛կ, մայրի՛կ, հայրիկը եկավ: Էլի խմած է: *(Ներս է մտնում Ջեքսոնը և ատրճանակի փողն ուղղում Տիտոյի կողմը):*
 ՋԵՔՍՈՆ— Ձեռքերդ վե՛ր:
 ՏԻՏՈՒ— *(Ուրախացած, որ դարձյալ կռիվ-կռիվ է խաղալու)* Ես չեմ հանձնվի, հայրիկ: *(Վազում, վերցնում է ավտոմատը և Ջեքսոնի վրա կրակում):* Տեսա՞ր, ես քեզ ավելի շուտ խփեցի:
 ՋԵՔՍՈՆ— Այո՛, շան լակոտ: Այսօր դու իմ գեղեցկուհիներին կախեցիր, քիչ էր, հիմա էլ ինձ սպանեցիր:
 ՏԻՏՈՒ— *(Դարձյալ՝ կրակելով)* Դե ընկիր, հայրի՛կ, դու սպանված ես:
 ՋԵՔՍՈՆ— Լավ-լավ: Ես հանձնվում եմ: *(Ատրճանակը տալով Տիտոյին)* Վերցրու, սա՛ էլ քեզ: Հարստացրու զինանոցդ: Առաջիկայում մեզ մեծ կռիվներ են սպասում, Տիտո:
 ՏԻՏՈՒ— *(Ուրախացած)* Իսկապե՞ս, հայրիկ:

Ներս է մտնում Քեթրինը:

ՔԵԹՐԻՆ— Օ՛, միստր Հարդի... (Նկատելով, որ խմած է. զարմացած) Միստր Հարդի՞ ...

ՋԵՔՍՈՆ— Այո՛, գեղեցկուհիս...

ՏԻՏՈ— (Դռնեղից մեկի կողմը նայելով) Մայրի՛կ, մայրի՛կ, հայրիկը Քեթրինին ասաց «գեղեցկուհիս»:

ՋԵՔՍՈՆ— Ձա՛յնդ, շան լակոտ:

ՔԵԹՐԻՆ— (Հաճոյախոսությունից շոյված) Միստր Հարդի, Դուք այսօր Ձեզ ամենևին նման չեք:

ՋԵՔՍՈՆ— Ընդամենը մի փոքր ճշտում. ճիշտ կլիներ, եթե ասեիր, թե ես միստր Հարդին չեմ: Քեզ խորհուրդ, Քեթրին: Եթե ուզում ես՝ ասածդ իրողությանը չհավատան, բոլոր «խելոքներին» դիր ապուշի տեղ և ասա ճշմարտությունը:

ՔԵԹՐԻՆ— (Ծիծաղելով) Բայց Դուք այսպես ավելի հետաքրքիր եք, միստր: Խնածությունը Ձեզ սազում է:

ՋԵՔՍՈՆ— Եվ ճիշտ է անում... Տիտո՛, կոնյակ բեր: Դու ես մեզ այսօր սպասարկելու: (Քեթրինին) Իսկ դու նստիր, անուշիկս...

ՏԻՏՈ— Մայրի՛կ, մայրի՛կ, հայրիկը Քեթրինին ասաց «անուշիկս»:

ՋԵՔՍՈՆ— Դու կոնյակ բեր, շան լակոտ:

ՔԵԹՐԻՆ— Միստր Հարդի... Ես չեմ խմում:

ՋԵՔՍՈՆ— (Քեթրինի աչքերին նայելով) Քեթրի՛ն... (Տիտոյին, որը կոնյակ է բերում) Լակո՛տ, ես ի՞նչ պիտի ասեի Քեթրինին...

ՏԻՏՈ— Գեղեցկուհիս, անուշիկս...

ՋԵՔՍՈՆ— Հա՛, ճիշտ է: Իսկ այն տխմարներն ստիպում են, որ ես ամեն հինգերորդ րոպեին «ապուշ» ու «հիմար» բղավեմ:

ՔԵԹՐԻՆ— (Դարձյալ ծիծաղելով) Միստր Հարդի, Դուք այսօր որքա՛ն լավն եք:

ՋԵՔՍՈՆ— Սրանից հետո այսպես հաճախ է պատահելու: (Իրենից ակախ) Ապո՛ւշ... Թո՛ւ...

ՔԵԹՐԻՆ— Ի՞նչ:

ՋԵՔՍՈՆ— Դա ես հենց այնպես ասացի, սիրելի՛ս, որպես կոչական:

ՏԻՏՈ— (Դռնեղից մեկը բախելով) Մայրի՛կ, մայրի՛կ...

ՋԵՔՍՈՆ— Տիտո՛, շան լակոտ, օգնիր, որ ոտքս ոտքիս զգեմ... (Ժամացույցին նայելով)

Ոնց որ արդեն ժամն է:

ՔԵԹՐԻՆ— Ինչի՞ ժամը, միստր:

ՋԵՔՍՈՆ— Դե, ասում են, թե ես այդպիսի սովորություն ունեմ. ոտքս ոտքիս զգած՝ սեղանի վրա պիտի տկտկացնեմ... (Տիտոյի օգնությամբ ոտքը զգում է ոտքին և սեղանին տկտկացնում):

ՔԵԹՐԻՆ— (Ծիծաղելով) Ասում են, չէ՞, Դուք այսօր շա՛տ հետաքրքիր եք, միստր:

ՋԵՔՍՈՆ— Տիտո՛, լցրո՛ւ բաժակները: Մենք այսօր... խմելո՛ւ ենք:

ՏԻՏՈ— (Բաժակները լցնելով) Մայրի՛կ, մենք այսօր հարբելո՛ւ ենք...

ՔԵԹՐԻՆ— Ես չեմ խմում, միստր: (Ցույց տալով գլուխը) Իսկույն խփում է:

ՋԵՔՍՈՆ— Տիտո՛, քո կարծիքով՝ հիմա ես ի՞նչ պիտի ասեմ միսիս Քեթրինին:

ՏԻՏՈ— (Անմիջապես վրա է տալիս) Գեղեցկուհի՛ս, անուշի՛կս, սիրելի՛ս...

ՔԵԹՐԻՆ— Օ՛... (Սիրալիիր հայացքով Ջեքսոնին նայելով) Ձեր կենացը, միստր: (Խնում է):

ՋԵՔՍՈՆ— Ձե՛կ... Այսուհետև քեզ համար ես Ջեկ եմ: Այլևս՝ ոչ մի «միստր»:

ՔԵԹՐԻՆ— Լսում եմ... Ձե՛կ...

ՋԵՔՍՈՆ— Տիտո՛...

ՔԵԹՐԻՆ— Շա՛ն լակոտ...

ՋԵՔՍՈՆ— Բաժակնե՛րը... (Ձեռքը զգում է Քեթրինի ուսին):

ՏԻՏՈ— Մայրի՛կ...

ՋԵՔՍՈՆ— Լո՞իր...

ՔԵԹՐԻՆ— Շան լակոտ:

ՋԵՔՍՈՆ— (Գլուխը ցույց տալով) Խփե՛ց...

ՔԵԹՐԻՆ— Տասին... Դու այսօր ինչ լավն ես, Ձե՛կ...

ՋԵՔՍՈՆ— (Տիտոյի բերանը փակում է և բղավում նրա փոխարեն) Մայրի՛կ...

ՔԵԹՐԻՆ— Տիտո՛... (Ցույց է տալիս, որ բաժակները լցնի):

ՋԵՔՍՈՆ— Փիսիկս... Կազրիկս...

ՔԵԹՐԻՆ— Ի՞նչ... (Եվս մի բաժակ խմելուց հետո) Ի՞նչ... Գիտե՞ս՝ այդպես ինձ նաև նա՛ էր ասում:

ԶԵՔՍՈՆ— Նա՞, որ... (ցույց է տալիս՝ պառկեցրեց) իսկ ինքը թռավ...

ՔԵԹՐԻՆ— (Հուզված) Այո՛, Զեկ... Ես դարձա մայր, իսկ նա թռավ՝ հայր չդարձած... Եվ ինձ ոչ ոք այլևս նրա պես խենթաբար չցանկացավ...

ԶԵՔՍՈՆ— Ապո՛ւշ... Հիմա՛ր... (Հուշերով տարված՝ Քեթրինը մի պահ հուզվում է: Զգացվում է, որ Զեքսոնի մեջ ծնվում է կարեկցանք): Տիտո՛...

ՏԻՏՈ— (Հուշում է): Գեղեցկուհի՛ս, անուշի՛կս... (Զեքսոնը նայում է Քեթրինի աչքերին):

ՔԵԹՐԻՆ— (Իրեն վերագտնելով) Քո աչքերը, Զե՛կ, ավելի ուժեղ կրակ են ժայթքում, քան այս շան լակոտի ավտոմատը... Ես վախենում եմ... (Զեքսոնից ցուցադրաբար փախչում է):

ԶԵՔՍՈՆ— (Հետապնդելով) Կանգնի՛ր... Կանգնի՛ր... Միևնույնն է, քեզ վրա ես մի ամբողջ կրակահերթ եմ տեղալու: (Քեթրինը «փախչում է», Զեքսոնը՝ «հետապնդում»):

ՔԵԹՐԻՆ— Օգնություն... Օգնություն... (Տիտոն սկսում է ճայթռուկներ պայթեցնել):

Կիսահագնված, թաց մազերով ներս է մտնում Քիմ Հարդին և զարմացած նայում Զեքսոնին ու Քեթրինին, որոնք, իրենց խաղով տարված, նրա ներկայությանը նշանակություն չեն տալիս:

ԶԵՔՍՈՆ— Տիտո՛: Առջևը փակիր, Տիտո... (Քիմ Հարդին կանգնում է մեջտեղում, իսկ մյուսները նրա շուրջը պտտվում են):

ՏԻՏՈ— Մայրի՛կ... Մեծ կռիվը սկսվե՛ց... (Կրակում է):

ՔԵԹՐԻՆ— Միսիս Հարդի... Միսիս Հարդի... փրկեք ինձ... (Ապաստանում է նրա թիկունքում):

ԶԵՔՍՈՆ— Միևնույնն է, քեզ վրա ես մի ամբողջ կրակահերթ... (Հայացքը հանդիպում է Քիմ Հարդիի հայացքին) հերթ... կրակ... Տի-տո... մենք... ըն-կանք... ծու-ղա-կը... Տի-տո... (Գրպանից սպիտակավուն թաշկինակ հանելով՝ զլխավերևում ծածանում է...)

Նոր պատկեր:

Զեկ Հարդիի աշխատասենյակը: Այստեղ են Զեքսոնը և Հարդին: Վերջինս խոսում է՝ վրդրվված քայլելով:

ՀԱՐԴԻ— Իսկական անգլուխ... Քո հայրը պատահաբար Մայն Ռիդը հո չէ՞: (Նստում է աթոռին և ոտքը զցում ոտքին): Ես քեզ վճարում եմ: Ընդ որում՝ շատ բարձր, իսկ դու սկանդալներ ես սարքում:

ԶԵՔՍՈՆ— Միստր Հարդի, ես...

ՀԱՐԴԻ— Ոչ մի՛ ես: Քեզ համար «ես» այլևս չկա: Քո այդ ես-ը (ցույց է տալիս իրեն) ես եմ, և դու միայն պիտի անես այն, ինչ ի շահ է (կրկին իրեն ցույց տալով) այս ես-ին: Քեզ ասել էինք՝ կձևանաս հիվանդ, քնաբեր կընդունես ու կքնես: Իսկ դու... հարբած...

ԶԵՔՍՈՆ— Միստր Հարդի, այն ես... Չէ՛, ներեցեք, Դուք... Չէ, ես... (Չի իմանում ինչ ասել) Այսինքն (մե՛կ Հարդիին ցույց տալով, մե՛կ իրեն) Դուք-ես-ը հարբած չի եղել:

ՀԱՐԴԻ— Ինչպե՞ս չի եղել, եթե բոլորն ասում են, որ եղել է:

ԶԵՔՍՈՆ— Բոլորը չեն իմացել: Իմացել են միայն ես... Դուք, այսինքն... Չէ... Գրողը տանի, մի խոսքով՝ միայն դուք-ես-ն է իմացել:

ՀԱՐԴԻ— Ի՞նչն ես դու իմացել: (Նայում է ժամացույցին):

ԶԵՔՍՈՆ— (Քունքը քորելով) Միայն ես եմ իմացել, որ խմած, հարբած չեմ... Ես ձևացրել եմ, միստր, որ ես, այսինքն՝ Դուք, մի խոսքով՝ մենք, կասկածելի չթվանք... Խմած Հարդին կարող էր տարբերվել չխմած Հարդիից, և ես, լինելով այդ խմած Հարդիի դերում, կարող էի այլևս կասկածելի չլինել... Մի խոսքով, միստր... (Ոտքը քորում է):

ՀԱՐԴԻ— Ես հենց առաջին պահից զգացի, որ դու տաղանդավոր սրիկա ես, Զոնի: Հիմա լսիր: Դու այստեղ մեկ ժամով, ընդամենը մեկ ժամով պիտի փոխարինես ինձ: Ոչ մեկին չես ընդունում, ոչինչ չես ստորագրում և հեռախոսներն անջատում ես: Ինձ այստեղ պետք է միայն քո ներկայությունը: Պա՞րզ է:

ԶԵՔՍՈՆ— Պարզ է, միստր:

ՀԱՐԴԻ— Կշիվես միայն քարտուղարուհու հետ՝ Էմմա Սմիթի: Հասկացա՞ր (Պատրաստվում է, որ դուրս գա սենյակի հետին դռնով):

ԶԵՔՍՈՆ— Հասկացա, միստր:

ՀԱՐԴԻ— Մեկ ժամ, Զեքսո՛ն:

ԶԵՔՍՈՆ— Մեկ ժամ, մի՛ստր:

Հարդին գնում է: Զեքսոնն անմիջապես նստում է նրա այթոռին: Լսվում է հեռախոսազանգ: Զեքսոնը մի պահ մտածում է, ապա հեռախոսները գծերից անջատում: Ներս է մտնում Էմման:

ԷՄՄԱ— Միստր Հարդի...

ԶԵՔՍՈՆ— (Անմիջապես ընդհատելով) Օ՛, սիրունիկս:

ԷՄՄԱ— (Անակնկալի գայով) Ի՞նչ:

ԶԵՔՍՈՆ— Դե... Ասում եմ... Իսկ, ինչ է, ընդունված չէ՞ր:

ԷՄՄԱ— Ի՞նչը, միստր:

ԶԵՔՍՈՆ— (Մի քիչ շփոթված) Դե... Ասում եմ, ինչ է, դա ընդունված չէ՞ր...

ԷՄՄԱ— (Սեթևեթելով) Միստր... Ձեզ չեմ հասկանում... Ես նույնիսկ մոռացա, թե ինչու ներս մտա... Գիտե՞ք, ինձ վաղուց... Ավելի ճիշտ՝ երբեք... այդ բառով, այդպես... Ես Ձեզ իսկապե՞ս, միստր...

ԶԵՔՍՈՆ— Ինչպե՞ս թե՛ վաղուց... Քեզ, ինչ է, միստր Հարդին մինչև հիմա... Թո՛ւ, ուզում էի ասել...

ԷՄՄԱ— Մի՛ ասեք... Այլևս ոչինչ մի՛ ասեք...

ԶԵՔՍՈՆ— (Ժամացույցին ցուցադրաբար նայելով) Ես միստր Հարդի ասելով՝ նկատի ունեի...

ԷՄՄԱ— (Կրկին՝ ընդհատելով) Գիտեմ, միստր... Նկատի ունեիք այն մյուս Հարդիին...

ԶԵՔՍՈՆ— (Ապշած) Ի՞նչ...

ԷՄՄԱ— Դուք որքա՛ն տարբեր եք իրարից...

ԶԵՔՍՈՆ— (Անակնկալի գայով) Ուրեմն... դու... զգացե՞լ ես...

ԷՄՄԱ— Ինչպե՞ս կարող էի չզգալ: Կույր պետք է լինել՝ չզգալու համար:

ԶԵՔՍՈՆ— Եվ վաղո՞ւց գիտեիր դա:

ԷՄՄԱ— Շատ վաղուց: Ձեզ մոտ աշխատելու օրվանից: Շուրջ երկու տարի:

ԶԵՔՍՈՆ— (Թեթևություն զգալով, կրկին՝ ինքն իրեն) Հիմար...

ԷՄՄԱ— Այդպես մի՛ ասեք, միստր: Հավատացեք, ես նույնիսկ ուրախ եմ, որ Դուք... երկուսն եք:

ԶԵՔՍՈՆ— (Կրկին՝ շփոթված) Ի՞նչ:

ԷՄՄԱ— Գիտե՞ք, այդպես ավելի հետաքրքիր է... Միօրինակ չէ...

ԶԵՔՍՈՆ— Իսկապե՞ս:

ԷՄՄԱ— Այո՛: Պատկերացրեք, որ ես Ձեր մեջ՝ որպես նախագահի, տեսնում եմ մի մարդու, իսկ այդ պաշտոնից դուրս, ինչպիսին հիմա եք, տեսնում եմ մի ուրիշի, մի ուրիշ Հարդիի...

ԶԵՔՍՈՆ— (Ուրախացած) Էմմա՛... Փիսիկս, վագրիկս...

ԷՄՄԱ— Զե՛կ... (Նետվում է Զեքսոնի գիրկը): Խոստանո՞ւմ ես, չէ, սիրելի՛ս... (Համբույրների տարակի տեղալով) Տեղակալի հաստիքը...

Ներս է մտնում Սառան և սեղանին տկտկացնում այնպես, ինչպես կթակեր դուռը: Էմման համբույրների տարակին ընդհատում է, բայց մնում Զեքսոնի ոտքերին նստած: Խոսում է հանգիստ:

ԷՄՄԱ— Եկա՞ր, Սառա:

ՍԱՌԱ— Ո՛չ, միսիս: Սա իմ ուրվականն է: Նմանակը:

ԶԵՔՍՈՆ— Ի՞նչ: (Էմմային հրում է, որը ոտքի է կանգնում): Ուրեմն՝ և դո՞ւ...

ՍԱՌԱ— Այո՛ միստր: Եվ ոչ միայն ես...

ԶԵՔՍՈՆ— (Ապշած, ցույց տալով Էմմային) Եվ... դո՞ւ...

ՍԱՌԱ— Այո՛, և՛ դա... Կարծում եմ՝ ժամանակն է ասելու, որ այստեղ բոլորն են երկու դեր խաղում: Ավելի ճիշտ՝ ամեն անվան տակ այստեղ երկու անձ է թաքնված:

ԶԵՔՍՈՆ— Տեր Աստվա՛ծ... Այս ո՞ւր եմ ընկե՛լ...

ՍԱՌԱ— Այնպես որ, միստր Հարդի, ինձ թվում է՝ ճիշտ կլինի, եթե տեղակալի հաստիքը նույնպես երկուսը լինի: (Էմմային, հեզմանքով) Այդպես, չէ՞, միսի՛ս... (Էմման, խեթ նայելով, ֆշշացնում է: Լսվում է Զեքսոնի բջջային հեռախոսի ծայնը):

ԶԵՔՍՈՆ— Այո՛... Ո՞վ... Սթի՞վը... Սթի՞վը, թե նրա նմանակը: (Հանդիսատեսների համար լսելի է դառնում նաև Սթիվի ծայնը):

ՍԹԻՎ— Ի՞նչ նմանակ, ապո՛ւշ:
 ՋԵՔՍՈՆ— Հենց նոր ես պարզեցի, որ ընկերությունում բոլորն ունեն իրենց նմանակը: Մի խոսքով՝ այստեղ կատարյալ շիլաշփոթ է:
 ՍԹԻՎ— Ինչե՛ր ես դուրս տալիս:
 ՋԵՔՍՈՆ— Դուրս չեմ տալիս, Սթիվ: Այդ մասին շտապ պետք է ասել նաև միստր Հարդիին... (Նայելով Էմմային և Սառային) Թո՛ւ... Ուզում էի ոչ թե Հարդի ասել, այլ... այլ... Մի խոսքով՝ հասկացար, Սթիվ:
 ՍԹԻՎ— (Ծաղրական տոնով) Հա, իսկույն հասկացա... Հիմա լսիր՝ ինչ եմ ասում: Հարդիին պիտի փոխարինես երկար ժամանակով: Լսո՞ւմ ես: Անորոշ ժամանակով:
 ՋԵՔՍՈՆ— (Մի պահ լռելուց հետո) Միայնա՞կ, սըր:
 ՍԹԻՎ— Այո՛, միայնակ:
 ՋԵՔՍՈՆ— Ես դեմ եմ, սըր: Այս շիլաշփոթից դուրս գալու համար ինձ նույնպես նմանակ է պետք: Ես կխոսեմ միստր Հարդիի... Թո՛ւ... Ուզում էի ասել... Մի խոսքով՝ հասկացար, Սթիվ:
 ՍԹԻՎ— (Կրկին՝ ծաղրական հնչերանգով) Անմիջապես՝ հասկացա, Ջոնի, բայց միստր Հարդիի հետ հիմա չի կարող խոսել նույնիսկ սատանան... Միստր Հարդիին առևանգել են...
 ՋԵՔՍՈՆ— (Անսպասելիությունից ապշած) Ի՞նչ...
 ՍԹԻՎ— Այո՛, Ջոնի: Անհավատալի փաստ: Եվ դա պիտի մնա գաղտնի: Լսո՞ւմ ես: Այլապես մեծ աղմուկ կբարձրանա, ընկերությունը կդառնա ոչ վստահելի և կկրի ֆինանսական վնասներ: Այնպես որ, Ջեքսոն, դու չունես այլընտրանք, իսկ այլ կերպ ասած՝ ունես անհավատալի բախտ...

Գործողություն երկրորդ

*Նոր պատկեր:
 Էդի և Սթիվ:*

ՍԹԻՎ— Ահա՛, թե ինչու էր Հարդիին միշտ ուզում ունենալ իր նմանակը:
 ԷԴԻ— Ջոհողություններ ֆինանսական, բարոյական, որ փրկես մորթիդ, սակայն ի վերջո...
 ՍԹԻՎ— Դու մտադիր չե՞ս գումարը վճարել, Էդի՛:
 ԷԴԻ— Գիտե՞ս, Սթիվ, բախտը ամեն օր մարդուն չի փորձում: Մեզ հարստանալու, միլիոնների տեր դառնալու բացառիկ հնարավորություն է տրված:
 ՍԹԻՎ— Այդ ինչպե՞ս: Որպես նախկին ոստիկան՝ քեզ ասեմ, Էդի, որ եթե փրկագինը չտանք, Հարդիին կսպանեն:
 ԷԴԻ— (Ձեկ Հարդիին նմանակելով՝ ոտքը զգում է ոտքին և խոսում մեղմ, հանգիստ տոնով): Սթիվ, բարեկամս... Որպես նախկին ոստիկան՝ մի՞թե չես տեսնում, որ մենք արդեն ունենք մեր Հարդիին: Ընկերության նախագահ Ջեքսոն-Ձեկ Հարդի... Դու չե՞ս ծանծրացել գործակալ լինելուց: Չէի՞ր ուզի ընկերությունում լինել երկրորդ դեմք:
 ՍԹԻՎ— Համար մեկ դեմք՝ Ջեքսոն-Ձեկ Հարդի... Դեմք երկրորդ՝ Սթիվ Կրուզ: Դեմք երրորդ...
 ԷԴԻ— Ո՛չ... Համար մեկ դեմք՝ Էդի Մոմսեն... Դեմք երկրորդ՝ Սթիվ Կռուզ...
 ՍԹԻՎ— Իսկ Ջոնի՞ն... Նրան նույնպե՞ս... (Ցույց է տալիս՝ պետք է գնդակահարել):
 ԷԴԻ— Դե ո՛չ: Նա կլինի դեմք առաջին «Ա»: Որպես սիմվոլիկ դեմք... Որպես Անգլիայի թագուհի...
 ՍԹԻՎ— Փաստորեն մենք նրան հիմա էլ դարձնելու ենք թագուհի՞...
 ԷԴԻ— Ստիպված ենք: Եվ այդ դեպքում նրա միլիոնները, ընկերության միլիոնները կլինեն մերը... Ջրկվել այդ միլիոններից հանուն մի ինչ-որ Հարդիի՞...
 ՍԹԻՎ— (Մտածելով) Ուրեմն առաջարկում ես զոհաբերել նրան:
 ԷԴԻ— Որպես հոգեբան՝ քեզ ասեմ, Սթիվ, որ... ստիպված ենք:
 ՍԹԻՎ— Բայց ես չէի ուզի, որ մեր միլիոններին արյուն խառնվի:
 ԷԴԻ— Իսկ ո՞վ ասաց, թե արյուն կլինի... (Հեզմանքով) Նրանք ասացին, որ ամեն բան լինելու է քաղաքակիրթ ձևով. միստր Հարդիին... Հիմա արդեն այսպե՛ս ասած միստր Հարդիին նրանք պատրաստվում են նստեցնել էլեկտրական աթոռի... Եվ ես արդեն զգվել եմ այդ Հարդիից, Սթիվ: Որքա՞ն ենք տանելու նրա նվաստացումները: (Նկատելով, որ հիմա էլ Սթիվն է մատնեքով տկտկացնում) Վերջապես ես չեմ կարող տանել այդ տկտկոցը... (Լսվում է հեռախոսազանգ: Էդին և Սթիվը նայում են հեռախոսին՝ զգալով, որ զանգահարում են Հարդիին առևանգողները):

ՍԹԻԿ— Դե ի՞նչ, էդի:

ԷԴԻ— *(Լսափողը վերցնելով)* Ես ասացի, որ այլևս չեմ կարող տանել այդ տկտկոցը...

Նոր պատկեր:

Զեկ Հարդի, Մայքլ և Մարկ:

ՄԱՐԿ— *(Խոսում է հեռախոսով)*: Ուրեմն այդպես... Դա ձեր վարջնակա՞ն որոշումն է: *(Մի պահ լռում է)*: Այսուհանդերձ, մենք դեռ կսպասենք... Գործը դեռևս բաց է: *(Հեռախոսն անջատում է և դառնում Հարդիի կողմը)*: Դե, ի՞նչ կասես, միստր Հարդի:

ՀԱՐԴԻ— *(Անհանգստացած)* Ինչո՞ւ է բաց:

ՄԱՅԶԷԼ— Բանն այն է *(հեզմանքով)*, հարազատս, որ գործում ի հայտ են եկել չնախատեսված, բնավ չնախատեսված հանգամանքներ:

ՀԱՐԴԻ— Այսի՞նքն:

ՄԱՐԿ— Ո՞վ կմտածեր, Հարդի՛, որ քո հարյուրավոր միլիոններից քո բարեկամները քո կյանքի փրկության համար չեն հատկացնի նույնիսկ մի քանի տասնյակը:

ՀԱՐԴԻ— Ինչպե՞ս թե՛ չեն հատկացնի:

ՄԱՐԿ— Հենց այդպես: Չեն հատկացնում ու վերջ:

ՄԱՅԶԷԼ— Եվ ինչպես երևում է, դու չես խուսափելու աթոռից:

ՀԱՐԴԻ— Չեմ հասկանում... Էդին չի վճարում փրկագի՞ն:

ՄԱՐԿ— Տեսնո՞ւմ ես, թե նույնիսկ այսքան ծայրահեղ իրավիճակում որքան հստակ է գործում քո միտքը:

ՀԱՐԴԻ— Չեմ հավատում... Բայց նա իր գումարը չէ, որ վճարում է, այլ՝ իմ:

ՄԱՅԶԷԼ— Որքա՞ն առողջ տրամաբանություն...

ՀԱՐԴԻ— Եվ ի՞նչ. ուզում է՝ ինձ նստեցնեք էլեկտրական աթոռի՞:

ՄԱՐԿ— Կարծում եմ՝ դեմ չի լինի նաև, եթե կախենք կամ *(ատորձանակով կրակելու շարժում ցույց տալով)* այսպես մի քանի անգամ...

ՀԱՐԴԻ— *(Մտորելով)* Ա՛խ... Ես արդեն հասկանում եմ, թե ինչ է կատարվում:

ՄԱՐԿ— Հարդի՛... Ինձ թվում է, դու արդեն չե՛ս հասկանում, թե ինչ է կատարվում:

ՀԱՐԴԻ— Գիտե՞ք՝ ինչն է բանը: Թյուրիմացության մեջ է նույնիսկ Էդին: Նույնիսկ նա արդեն չի տարբերում: *(Մարկը և Մայքլը հարցական հայացքով նայում են իրար)*:

ՄԱՅԶԷԼ— Իսկ ինձ թվում է, որ նա շա՛տ լավ է տարբերում: *(Լսվում է Մարկի բջջային հեռախոսի ձայնը)*:

ՄԱՐԿ— *(Խոսում է զգաստացած, վախեցած)*: Լսում եմ, սըր:

ԽՈՍԱԿԻՑ— Ի՞նչ եղավ գործը: Ո՞ւր է գումարը:

ՄԱՐԿ— Սըր, գործում ի հայտ են եկել անսպասելի հանգամանքներ:

ԽՈՍԱԿԻՑ— Ի՞նչ է նշանակում անսպասելի հանգամանքը, Մարկ:

ՄԱՐԿ— Դե, սըր... Գումարը չեն տալիս:

ԽՈՍԱԿԻՑ— Ինչպե՞ս թե չեն տալիս:

ՄԱՐԿ— Նրանք համար միևնույնն է, թե ինչպես կվարվենք:

ԽՈՍԱԿԻՑ— Այդպե՞ս ուրեմն: Այդ դեպքում գործեք ըստ երկրորդ պլանի... Ազատվեք այդ «ականից»: Եվ որքան շուտ, այնքան լավ: Լսո՞ւմ ես: Ազատվեք, քանի դեռ չի պայթել...

ՄԱՐԿ— Լսում եմ, սըր: *(Հարդիին)* Կարծում եմ՝ դու նաև մեր զրույցը հասկացար: Այնպես չէ՞, միստր:

ՀԱՐԴԻ— *(Վախեցած)* Այստեղ թյուրիմացություն կա: Կապվեք նորից Էդիի հետ և անհրաժեշտ գումարը կստանաք:

ՄԱՅԶԷԼ— Նրանք դոլարներն ավելի են գնահատում, քան քո կյանքը, Զե՛կ:

ՀԱՐԴԻ— *(Վճռականորեն)* Կապվե՛ք Էդի Մոմսենի հետ:

ՄԱՐԿ— Խնդրեմ: *(Համար հավաքելով՝ հեռախոսը տալիս է Հարդիին: Լսվում է Էդիի ձայնը)*:

ԷԴԻ— Կարծեմ՝ բավական պարզ ասացի...

ՀԱՐԴԻ— Էդի՛, խոսում է Հարդիին: Հարցը բավական լուրջ է: Հարկավոր է վճարել գումարը:

ԷԴԻ— *(Անակնկալի գալով և չիմանալով ինչ ասել)* Խոսում է Հարդի՞ն:

ՀԱՐԴԻ— Այո՛, այս ես եմ... Ինչո՞ւ ես լռում, ... Ես իսկական Հարդին եմ, հասկանո՞ւմ ես:

ԷԴԻ— Իսկական Հարդի՞ն:

ՀԱՐԴԻ— Այո՛: Իսկական: *(Մարկը և Մայքլը նայում են իրար)*:

Էրի— *(Անելիքը արդեն հասկանալով)* Ո՛չ, դու իսկական Հարդին չես: Դու կեղծ, սարքովի Հարդին ես: Մենք քեզ, շրջմոլի՛կ, նախապատրաստում էինք այսպիսի օրվա համար: Այնպես որ, քեզ վրա տասնյակ միլիոններ ծախսելու ցանկություն չունենք: Մեր խոսակցությունն էլ ավարտվեց: Կե՛րջ.. *(Հեռախոսն անջատում է: Հարդին մնում է շվարած):*

ՄԱՅՔԼ— *(Հարդիին)* Կեղծ Հարդի՛... Շրջմոլի՞կ...

ՄԱՐԿ— Ի՞նչ էր դա նշանակում, մի՛ստր:

ՀԱՐԴԻ— Գիտե՞ս՝ հարցն ինչն է, սրը: Ես չէի ցանկանում ասել նույնիսկ հիմա՝ այսպիսի ծայրահեղ պահի, սակայն աթոռն ստիպում է խոսել: Բանն այն է, որ դուք նրա՛ն չեք առևանգել, ում ցանկացել եք:

ՄԱՅՔԼ— Ես կարծում եմ, որ քո բանականությունը դեռևս սթափ է, Հարդի: Եվ ասեմ, որ մենք կատակելու ցանկություն չունենք:

ՀԱՐԴԻ— Հարցն էլ այն է, որ ես... Հարդին չեմ: *(Մարկը և Մայքլը կրկին նայում են իրար... Հարդին ցույց է տալիս հեռախոսը):* Ջանգեք ընկերություն, խնդրեմ, հարցրեք, թե որտե՞ղ է միստր Հարդին:

ՄԱՐԿ— *(Հարդիի շուրջը պտտվելով ու նրան ուշադրությամբ նայելով)* Հարդին չե՞ս:

ՀԱՐԴԻ— Ո՛չ:

ՄԱՅՔԼ— Ո՞վ ես հապա:

ՄԱՐԿ— Հենց նոր դու ասացիր, որ Հարդին ես: Այն էլ... իսկակա՛ն:

ՀԱՐԴԻ— Ես դա ասացի էդիին շփոթեցնելու համար: Իսկ ես Ջոնի Ջեքսոնն եմ: Շրջմոլիկ, որին ստիպեցին դառնալ Ջեկ Հարդի: Այսինքն՝ նրա նմանակը: *(Այս պահից սկսում է խաղալ շրջմոլիկի դեր՝ փորձելով ընդօրինակել Ջեքսոնին):*

ՄԱՐԿ— Փչում ես: Սա ֆիլմ չէ, Հարդի: Հեքիաթներիդ հավատացող չկա:

ՀԱՐԴԻ— *(Հաստատականորեն)* Ես Ջոնի Ջեքսոնն եմ: *(Քունքը քորում է):*

ՄԱՅՔԼ— Կերջացրո՛ւ, Ջե՛կ:

ՀԱՐԴԻ— Իսկ դուք զանգեք: Ընդամենը զանգեք ընկերություն և խնդրեք միստր Հարդիին: *(Իբր ինչպես սովորություն, ինչպես շրջմոլիկը կաներ, մոխրամանից վերցնում է ծխախոտի մնացուկ և դնում շուրթերին):* Միայն թե չտաք «Ջեքսոն» անունը, որովհետև այնտեղ ձանաչում են միայն մեկ անձի՝ Միստր Հարդիին: *(Շրջմոլիկի նման զրպաններում փնտրում է լուցկի, բայց հանում է կրակվառիչ):*

ՄԱՐԿ— Եվ ինչպե՞ս է, որ դուք իրար այդպես նման եք:

ՀԱՐԴԻ— Այդ մասին արդեն նրան հարցրեք՝ Արարչին:

ՄԱՅՔԼ— Փչում է, Մարկ: Ուզում է կաշին փրկել:

ՀԱՐԴԻ— *(Անդրավարտիքի փողքը բարձրացնելով՝ ոտքը քորում է):* Լավ, սպանեք ինձ, բայց համոզված եղեք, որ շուտով դարձյալ կհանդիպենք... Բոլոր դեպքերում խորհուրդ եմ տալիս նախ խոսել միստր Հարդիի հետ...

ՄԱՐԿ— *(Մտածելով)* Տո՛ւր հեռախոսը, Մայքլ... *(Կերջինս հեռախոսը տալիս է նրան):*

Նոր պատկեր:

Ջեքսոնը Հարդիի աշխատասենյակում՝ նրա աթոռին բազմած, հեռախոսով համար է հավաքում:

ՋԵՔՍՈՆ— Էդի՞:

ԷՐԻ— *(Այնպես, ինչպես կխոսեր Հարդիի հետ)* Այո՛, միստր:

ՋԵՔՍՈՆ— Լսիր, Էդի... Ապո՛ւշ... Սա հենց այնպես, որպես կոչական...

ԷՐԻ— Պարզ է, միստր:

ՋԵՔՍՈՆ— Գիտե՞ս, Էդի, ես սովորում եմ միստր Հարդիի... Թո՛ւ... Ուզում եմ ասել՝ իմ կյանքի պատմությունը ու հասել եմ մի հանգուցային կետի:

ԷՐԻ— Լսում եմ, միստր:

ՋԵՔՍՈՆ— Շատ մութ ու հանելուկային է այդ հանգույցը: Ինչպե՞ս է եղել, որ միստր Հարդին... Թո՛ւ... մի խոսքով՝ ես, ընկերությունում համեստ դիրք ունեցող աշխատողից հասել եմ... Մի խոսքով՝ հասկացար... Եվ ինչպե՞ս է եղել, որ այդ թռիչքը զուգահիսպել է իմ ամուսնության և Մարի Հադսոնին ծանոթանալու հետ... Ի՞նչ կասես, Էդի:

ԷՐԻ— Մի՛ստր, որպես հոգեբան՝ խորհուրդ կտամ այդ հանգույցի մեջ շատ չխորանալ:

ՋԵՔՍՈՆ— *(Փռշտում է):* Սա որպես շեշտ այդ հանգույցի վրա: Իսկ դու բոլոր դեպքերում, որպես հոգեբան՝ մտածիր, Մոմսեն: *(Լսակողը դնում է):*

Գալիս է Սառա Փիթը՝ ինչպես միշտ՝ ձեռքին փաստաթղթեր:

ՍԱՌԱ— Միստր Հարդի... Որքան սազում է Ձեզ այդ փողկապը... *(Ջեքսոնը, մտքերով տարված, մի պահ ուշադրություն չի դարձնում):* Միստր Հարդի... *(Թղթերը դնում է սեղանին):* Կարելի՞ է նստել:

Ջեքսոն— Նստե՛լ...

ՍԱՌԱ— Այո, նստե՛լ:

Ջեքսոն— Իսկ սովորաբար դու ի՞նչ էիր անում:

ՍԱՌԱ— Ե՞րբ:

Ջեքսոն— Դե... երբ բերում էիր այդ... զիբիլները:

ՍԱՌԱ— *(Ծիծաղելով)* Օ՛... Միստր... Ձեզ որքան սազում է կատակը... Դուք այսօր իսկական միստր Հարդին եք և ոչ թե նա...

Ջեքսոն— *(Ջարմանքով)* Ո՞վ:

ՍԱՌԱ— Դե, Ձեր այն մյուս տեսակը... Պաշտոնականը: Իսկ ես Ձեզ հենց այսպիսին եմ սիրում: Այսպես Դուք ճիշտ Ձեզ նման եք...

Ջեքսոն— Իրո՞ք:

ՍԱՌԱ— Այո՛: Եվ այս դեպքերում ես սովորաբար... *(Ջեքսոնի աչքերին նայելով)* Նստե՛մ...

Ջեքսոն— Իսկ սովորաբար...

ՍԱՌԱ— *(Ջեքսոնի գիրկը նետվելով)* Միստր... Սիրելիս... *(Սկսում է համբուրել):* Քո շուրթերը... Ոնց որ բոց լինեն... *(Հեռախոսը զանգում է)...* Գիշերվա խավարում... Քո այտերը ոնց որ... *(Ջանգի ձայնից վրդովված)* Թո՛ւ... գիշեր լինեն... *(Դժկամությամբ վերցնում է լսակողը):* Այո... Միստր Հարդի՞ն... Ո՛չ, միստր Հարդին տեղում չէ: *(Լսակողը դնում է):* Սովորականի պես, միստր...

Ներս է մտնում Էմման: Սառան վերջին բառերը կրկնում է այլ տոնայնությամբ:

ՍԱՌԱ— Սովորականի՛... պե՛ս... մի՛ստր...

ԷՄՄԱ— Հրամանները պատրաստ են: Վաղվանից քաղաքի բոլոր շրջնովիկները կարող են ստանալ տասնհազարական դոլար:

ՍԱՌԱ— *(Ջարմացած)* Ի՞նչ...

ԷՄՄԱ— Ընկերության բոլոր աշխատողները կպարգևատրվեն հարյուրհազարական դոլարով:

ՍԱՌԱ— *(Ուրախացած)* Ի՞նչ...

ԷՄՄԱ— Իսկ ես և... *(Սառային նայելով)* մի խոսքով՝ նշանակված ենք տեղակալ:

ՍԱՌԱ— *(Կրկին համբույրներ տեղալով Հարդիի դեմքին)* Միստր Հարդի... Միստր Հարդի... Այսուհետև դու իմն ես և ուրիշ ոչ մեկինը:

ԷՄՄԱ— *(Նույնպես հարձակվելով Հարդիի վրա)* Ո՛չ, միստր Հարդին իմն է... *(Սկսում են նրան գրեթե քաշքշել):*

ՀԱՐԴԻ— Ես... *(Համբույրների տարափից չի կարողանում խոսել):*

ՍԱՌԱ— Իմն է...

ԷՄՄԱ— Ո՛չ... Իմն է...

ՀԱՐԴԻ— Ես... *(Հեռախոսը կրկին զանգում է):*

ԷՄՄԱ— *(Լսակողը վերցնում է և խոսում միանգամից):* Միստր Հարդին չի վերադարձել...

Ներս է մտնում Մարի Հադսոնը:

ՄԱՐԻ— Միստր Հարդի՛...

ՍԱՌԱ— Իմն է...

ԷՄՄԱ— Ո՛չ, իմն է...

ՄԱՐԻ— *(Մի պահ լուռ նայելուց հետո)* Ա՛յ թե կնամոլն ես դու, միստր... Ո՛չ... Արդեն իմն է... *(Առյուծի մռնչյուն արձակելով՝ նետվում է Հարդիի վրա):*

Լսվում են խառը ձայներ.

— Փիսիկս...

— Վագրիկս...

— Շլդիկս...

ՄԱՐԻ— Ես քեզ կխեղդեմ հիմա... *(Իբր խեղդում է... Հեռախոսը նորից է զանգում: Մարին վերցնում է լսափողը):* Ոչ... Միստր Հարդին... այլևս... չկա...

Նոր պատկեր:
Մարկ, Մայքլ և Հարդի:

ՄԱՐԿ— *(Լսափողը դնելով)* Ասաց, որ միստր Հարդին այլևս չկա:

ՀԱՐԴԻ— Ինչպե՞ս թե չկա:

ՄԱՅՔԼ— Երրորդ անգամ ասում եմ, որ այնտեղ Հարդի չկա, իսկ դու պատմում ես նույն հեքիաթը:

ՀԱՐԴԻ— *(Նյարդայնացած)* Ի՞նձ տուր հեռախոսը: *(Հարդիի հաստատակամությունից տարակուսանքի մեջ ընկած՝ Մայքլը համար է հավաքում և լսափողը մեկնում նրան: Հեռախոսից լսվում են կանանց ձիչեր, բղավոցներ... Բոլորը ապշած նայում են իրար: Խոսել սկսում է Հարդին):* Ձե՞կ... Լսո՞ւմ ես, Հարդի... Ի՞նչ է կատարվում այդտեղ, մի՞ստր... *(Լսվում է Ջեքսոնի ձայնը՝ տարօրինակ հնչերանգով):*

ՋԵՔՍՈՆ— Ձեկ Հարդին... Ձեկ Հարդին լսում է...

ՀԱՐԴԻ— *(Ուրախությունից ցնծալով)* Ձեկ Հարդին է... Ձեկ Հարդին լսում է... Այնտեղ է Ձեկ Հարդին... *(Մայքլը և Մարկը մնում են շփոթահար):* Ինչպե՞ս եք, միստր Հարդի... *(Մարկին և Մայքլին)* Ձվարձանում է միստր Հարդին... Ես մի քիչ ուշանում եմ, միստր, բայց կգամ: Շուտով կվերադառնամ: Առայժմ, միստր: *(Լսափողը դնում է):* Ասում էի, չէ՞, որ ես Ջեքսոնն եմ, Ջոնի Ջեքսոնը: *(Դարձյալ անդրավարտիքի փողքը բարձրացնում է, ոտքը քորում և մոխրամանից վերցնում ծխախոտի ևս մի մնացուկ):*

ՄԱՐԿ— Հիմա ի՞նչ ենք անելու, Մայքլ: *(Լսվում է Մարկի բջջային հեռախոսի ձայնը: Նա պատասխանում է բավական երկյուղած):* Լսում եմ:

ԽՈՍԱԿԻՑ— Ի՞նչ արեցիք, Մարկ: Ավարտեցի՞ք:

ՄԱՐԿ— Ո... ո՛չ... սըր:

ԽՈՍԱԿԻՑ— Ո՞չ: Ի՞նչ է նշանակում՝ ոչ:

ՄԱՐԿ— Գիտե՞ք՝ բանն ինչ է, միստր... Գործում ի հայտ են եկել անսպասելի, չնախատեսված նոր հանգամանքներ:

ԽՈՍԱԿԻՑ— Ի՞նչ բան է «անսպասելի հանգամանք»-ը: Չլինի՞ նա փախել է:

ՄԱՐԿ— Ո՛չ, Հարդին այստեղ է... Ավելի ճիշտ՝ այստեղ է ոչ թե Հարդին, այլ... Ինչպե՞ս ասեմ... Եղել է թյուրիմացություն: Մենք Հարդիի՞ն չենք առևանգել:

ԽՈՍԱԿԻՑ— Ի՞նչ... Գլխի՞դ է խելքը: Ի՞նչ է նշանակում՝ մենք Հարդիին չենք առևանգել:

ՄԱՐԿ— *(Իրեն կորցրած)* Այո՛, միստր: Այդպես է: Եղել է շփոթմունք:

ԽՈՍԱԿԻՑ— Իսկ ո՞ւմ եք առևանգել. ՄԱԿ-ի քարտուղարի՞ն, թե Հռոմի պապին:

ՄԱՐԿ— Ինչ-որ... Ինչ-որ շրջմոլիկի...

ԽՈՍԱԿԻՑ— Մարկ, դուք արդեն գժանոցո՞ւմ եք, թե նոր եք պատրաստվում գնալ: Միլիոնատեր բանկիրին չեք տարբերում շրջմոլիկի՞ց:

ՄԱՐԿ— Գիտե՞ք՝ բանն ինչ է, միստր... Բանն այն է, որ այս ապուշը... այս շրջմոլիկը... նույն Հարդին է: Ուզում եմ ասել... Նրա նմանակն է: Սատանան էլ սրանց տարբերել չի կարող: Հազնվում են նույն ձևով, խոսում նույն ձայնով...

ԽՈՍԱԿԻՑ— Ի՞նչ:

ՄԱՐԿ— Այո՞ո... Փաստորեն նա... ունեցել է նմանակ... *(Մի պահ լռում են):* Ի՞նչ անենք հիմա, միստր:

ԽՈՍԱԿԻՑ— Հագցրեք Հռոմի պապի հագուստները և ուղարկեք աղոթելու:

ՄԱՐԿ— Այսինքն, սըր:

ԽՈՍԱԿԻՑ— Բաց թողեք, գնա: Մեզ փող է հարկավոր, ոչ թե սկանդալ:

ՄԱՐԿ— Լսում եմ, միստր:

ԽՈՍԱԿԻՑ— Լավ կլինի, որ դու նաև տեսնե՛ս, ապո՛ւշ: *(Հեռախոսն անջատում է):*

ՄԱՐԿ— *(Հարդիին)* Եվ այս ամենը, տխմա՛ր, քո մոռոթի պատճառով...

Նոր պատկեր: Ձեկ Հարդիի աշխատասենյակը:
Ջեքսոն և Էդի:

ՋԵՔՍՈՆ— Դու ճիշտ ես, Էդի: Հիմա բոլորը կարծում են, թե իրենցից բացի՝ բոլորն ապուշ են, ու կարելի է նրանց հիմարացնել:

Էրի— Որպես հոգեբան՝ միստր Հարդի, խորհուրդ եմ տալիս կատարվածը մոռանալ արագ: Դրա համար կան հատուկ մեթոդներ:

Ջեքսոն— Ինձ թվում է՝ ժամանակն է, Էրի, որ հոգեբանական քո մեթոդները սկսես կիրառել քեզ վրա: Եվ գուցե շատ արագ մոռանաս ընկերությունում անցկացրած քո անհոգ կյանքը:

Էրի— Այսինքն, միստր:

Ջեքսոն— Ես քեզ ազատում եմ, ապո՛ւշ: Դու այլևս իմ գործակալը չես:

Էրի— Այդ դեպքում, ներեցեք, միստր, ես կբողոքեմ, քանի որ եթե Ձեր գործակալը չեմ, ուրեմն իրավունք չունեք ինձ անվանելու ապուշ:

Ջեքսոն— Հրաման ես դեռ չեմ տվել, Էրի...

Էրի— Բայց ինչի՞ համար, միստր:

Ջեքսոն— Նրա՛ համար, մեծն հոգեբան, հատուկ մեթոդիստ, որովհետև ապուշին չես կարողանում տարբերել ինձանից:

Էրի— Մի՛ստր, այսր այնքա՛ն նման են ձեր ծայները: Այդ ապուշն էլ արդեն այնպես է ձեզ նմանակում, որ տարբերելու համար հատուկ մեթոդ... միջոցներ են պետք:

Ջեքսոն— Իսկ այդ սխալի համար քիչ էր մնում, որ ես հատուցեմ կյանքով:

Էրի— Փառք Աստծո, ամեն բան ավարտվեց բարեհաջող:

Ջեքսոն— Եվ այսուհանդերձ դու ինչո՞ւ չէիր վճարում, Էրի, և ինչո՞ւ այդ մասին չէիր խորհրդակցում ինձ հետ: *(Սովորականի պես ոտքը զգում է ոտքին և սեղանին տկտկացնում):*

Էրի— Բանն այն է, միստր, որ ձեր համարը չէր պատասխանում, իսկ այդ շրջմոլիկի համար վճարելը կնշանակեր տասնյակ միլիոնները տալ քամուն:

Ջեքսոն— Ուրեմն դու այն կարծիքին ես, որ Ջոնիի համար... Ի դեպ՝ այսուհետև նա քեզ համար ոչ թե Ջոնի է, այլ միստր Հարդի: Պա՞րզ է, Էրի:

Էրի— Պարզ է, միստր:

Ջեքսոն— Մի խոսքով՝ այդ հիմարի համար...

Էրի— Նկատի ունե՞ք միստր Հարդիի՞ն, սըր:

Ջեքսոն— Նկատի ունեմ, Էրի... Մի խոսքով՝ դու այն կարծիքին ես, որ նրա համար չէր կարելի ինչ-որ թղթի կտորներ տալ քամո՞ւն:

Էրի— Նայած, թե այդ թղթի կտորները ոսկու համարժեքով ինչ գին ունեն: Թուրթ կա, որ թանկ է ոսկուց, և կա ոսկի, որ թանկ է կյանքից: Սա հենց այդ դեպքն էր, միստր:

Ջեքսոն— Միստր Հարդի՛:

Էրի— *(Ուշադիր նայելով)* Այո՛, միստր Հարդ... Միստր Հարդ... Գրողը տանի, Ջեքսո՛ն...

Ջեքսոն— Մի՛ստր Ջեքսոն, Էրի՛:

Էրի— *(Ապշանքից կարկամած)* Ճիշտ է... Միստր... Ջեքսոն... *(Դողդողացող ձեռքերով գրպանից դեղ է հանում):* Ջուր... Միստր Հար... Ջեք... Ջեքսոն... *(Ձեռքը մեկնում է):*

Ջեքսոն— Դա ծաղկաման է, ապո՛ւշ: Իսկ ջուրն այնտեղ է: *(Ցույց է տալիս դռան կողմը):*

Էրին դողդողալով դուրս է գալիս: Հետին դռնից ներս է մտնում Հարդին:

ՀԱՐԴԻ— Ա՛յ քեզ ցնդածներ... Պատկերացնո՞ւմ ես, Ջոնի՛, նրանց համոզեցի, որ ես ոչ թե ես եմ, այլ դու:

Ջեքսոն— Իսկ ես, միստր, ոչ մի կերպ չեմ կարողանում համոզել, որ ես ոչ թե դու եմ, այլ ես... *(Տեղը գիջում է Հարդիին):*

ՀԱՐԴԻ— Այսօր քեզ ազատություն եմ տալիս, Ջոնի՛: Գնա, ուր կուզես:

Ջեքսոն— Ես հոգնել եմ, միստր: Կուզեի պառկել մի նստարանի, պայուսակը դնել գլխիս տակ ու վայելել անմեղ քուն... *(Դուրս գալով)* Գուրբայ, միստր:

Էրին վերադառնում է և նստում նույն տեղը:

Էրի— Բայց դու իզուր ես վիրավորվել, Ջեքսոն: *(Հարդին զարմացած նայում է նրան):* Ես ունեի մի գաղափար, որ եթե իրականանար, առաջին հերթին շահող կլինեիր դու:

ՀԱՐԴԻ— Եվ ի՞նչ գաղափար էր դա:

Էրի— Չես պատկերացնում, թե ինչ կլիներ, եթե նրանք սպանեին Հարդիին:

ՀԱՐԴԻ— Դե, ինչ պիտի լիներ: Բանկը կզլխատվեր: Բոլորը կմնային առանց հայրիկի:

Էրի— Ու քեզ թվում է, թե նա այստեղի հայրի՞կն է: Լավ հայրիկ է, ինչ խոսք: Ահա քեզ ինչ կասեմ, Ջեքսոն... *(Մի պահ լռում է):* Լավ, թողնենք դա: Ես մտածել էի, որ նրան սպանելու դեպքում ընկերության նախագահը դառնա՞ս դու:

ՀԱՐԴԻ— *(Ապշած) Ե՞ս...*

Էրի— Այո՛, միստր Ջեքսոն: Միանձնյա: Փոփոխությունը ոչ ոք չէր գգա, և մենք միանգամից կդառնայինք հարյուրավոր միլիոնների տեր: Այնպես, ինչպես ժամանակին ինքը դարձավ՝ Հարդին:

ՀԱՐԴԻ— Հետաքրքիր է... Իսկ ինչպե՞ս նա դարձավ:

Էրի— Ուզում ես՝ հանգո՞ւյցը բացեմ: Հարդին, այո՛, ընկերությունում ուներ համեստ դիրք, և առաջընթաց ունեցավ այն պահից, երբ սկսեց սիրահետել ապագա կնոջը՝ ընկերությունում վարչության պետ Քիմ Հոլին: Եվ կարծում ես՝ սիրելի՞՞վ նրան: Ո՛չ, Ջոնի: Այն պատճառով միայն, որ նա ընկերության նախագահի դուստրն էր: Միակ դուստրը: Իսկ հետո Հարդիի համար դեպքերը զարգացան գլխապտույտ հաջողությամբ:

ՀԱՐԴԻ— Հետաքրքիր է... *(Վեր կենալով՝ սկսում է քայլել):* Ապա՞, Էրի:

Էրի— Իմանալով, որ ինքը շուտով վախճանվելու է, Քիմի հայրը՝ Ալեքս Հոլը, ապահովեց Հարդիի առաջընթացը՝ նրան հանձնելով նախագահի պաշտոնը:

ՀԱՐԴԻ— *(Ձայրույթը զսպելով) Այո՛...*

Էրի— Ասում ես՝ ինչպե՞ս է եղել, որ դա համընկել է Մարի Հադսոնի հետ նրա ծանոթանալու: Այստեղ նույնպես շան գլուխ է թաղված: Եվ այդ գլուխ թաղողը դարձյալ հայր է: Այս անգամ՝ Մարիի հայրը: Նա բանկում ուներ և այժմ էլ ունի խոշոր բաժնեմաս: Առանց նրա՝ գործը գլուխ չէր գա, և Հարդին գտավ տարբերակ, այսպես ասած՝ միջնորդ, որն է՝ Մարի Հադսոնը:

ՀԱՐԴԻ— Մարի Հադսոնը:

Էրի— Այո՛, Ջոնի: Բավական է, որ նրա հետ Հարդին կապերը խզի, և վերջ...

ՀԱՐԴԻ— Իսկապե՞ս...

Էրի— Մի գաղտնիք էլ բացեմ: Հարդին հիմա որպես տղամարդ էլ մի բան չէ: Որքան զգում եմ, դարձել է անկարող:

ՀԱՐԴԻ— Ի՞նչ ես ասում:

Էրի— Ու քեզ պահում է նաև նրա համար, որ կարողանա փրկել իր տղամարդկային պատիվը:

ՀԱՐԴԻ— Ահա թե ինչ, Էրի:

Էրի— Եվ կնոջն էլ ամենևին չի խանդում, նրա համար միևնույնն է, թե դու ինչպես կվարվես հետը, որովհետև չի սիրում: Իսկ որտեղ չկա սեր, չկա նաև խանդ: Միլիոն՝, փո՛ղ. ահա, թե ինչն է նրա պատիվը:

ՀԱՐԴԻ— Ու փաստորեն մեզ ձեռք էր տալիս նման սրիկայի մա՞հը:

Էրի— Այո՛, Ջոնի:

ՀԱՐԴԻ— Այո, մի՛ստր:

Էրի— Այո՛, միստր:

ՀԱՐԴԻ— Միստր Ջեքսոն:

Էրի— *(Ուշադիր նայելով) Միստր Ջեք... միստր Ջեք... Ջեք... Հարդի՞... Սա ի՞նչ բան է, գրողը տանի... (Ձեռքը կրկին մեկնում է): Ջու... Ջու... Ջուր... (Ուշագնա լինելով, ընկնում է սեղանին):*

Գալիս է Էմման: Էդիին ընդհանրապես ուշադրություն չի դարձնում:

ԷՄՄԱ— Միստր Հարդի, եթե իմանաք, թե Ձեզ ինչպես են սկսում սիրել ընկերությունում... *(Սեղանին թղթեր դնելով) Գումարներն արդեն բաժանված են, փոխանցված: Ահա ստացականները: Բոլորը Ձեր խոսքերից մեջբերումներ են անում, Ձեզ ընդօրինակում: Որքա՞ն իմաստնացել եք Դուք, միստր, որքան բարի եք դարձել:*

ՀԱՐԴԻ— *(Հեզմանքով) Ժիշտ է, շատ եմ իմաստնացել, իսկ (Էդիին նայելով) օձը, ասում են իմաստնության խորհրդանիշն է: Նա միշտ դեպի իմաստնությունն է ձգտում:*

ԷՄՄԱ— Ահա և՛ հավաստիքը խոսքերիս: *(Դուրս գնալով) Ասում եմ, չէ՞, Դուք վերջերս ուրիշ եք դարձել, միստր:*

ՀԱՐԴԻ— *(Բերած փաստաթղթերը կարդալով) Ինչ-ի՞նչ... Տասը միլիոն... Քսան միլիոն... (Աստիճանաբար ավելի ու ավելի զայրանալով) Հարյուր միլիոն... Պարզևատրություն... Նվեր... Աշխատակազմին... Էմմային, Քեթրինին... Շրջմուխկներին... (Ձեռք սեղանին խփելով) Էդի՛...*

Էրի— *(Անմիջապես վեր թռչելով)* Մի՛ստր...
ՀԱՐԴԻ— *(Վեր է կենում և սկսում քայլել)* Կորա՛վ, Էրի...
Էրի— Ներողություն, մի՛ստր:
ՀԱՐԴԻ— Ձախողվեցինք: Վե՛րջ: Ահա քո հոգեբանական հնարքները, հատուկ մեթոդները: Մեկ օրում քամուն տրվեցին միլիոնները, հարյուրավոր միլիոնները...
Էրի— Միստր Հարդի...
ՀԱՐԴԻ— Վե՛րջ: Փորձը ավարտվեց արասափելի ձախողմամբ: Հօդս ցնդեցին միլիոնները: *(Թղթերը շարտում է):* Վերցրու քո Ջեքսոնին, և չքվեք միասին գրողի ծոցը... Մեկընդմի՛շտ:
Էրի— Մի՛ մոռացեք, միստր, որ փորձի շնորհիվ փրկվեց Ձեր կյանքը:
ՀԱՐԴԻ— Այս միլիոնների առաջ *(կրկին փաստաթղթեր շարտելով)* գին չունի նույնիսկ իմ կյանքը...

Էդին գնում է: Հարդին, գլուխը բռնած, նստում է: Քիչ անց ներս է մտնում Քիմ Հարդին:

ՀԱՐԴԻ— *(Անակնկալի գալով)* Քի՞մ:
ՔիՄ— Ինչպես տեսնում եմ, դու այստեղ մի ճակատամարտ արդեն ավարտել ես: Վե՛րջ, ես պահանջում եմ ապահարզան:
ՀԱՐԴԻ— Քեզ սխալ տեղեկություններ են հասել, Քիմ: Դա թյուրիմացություն է: Դա ես չեմ եղել...
ՔիՄ— Անպատկա՛ռ, լափ՛րշ, կնամո՛ւ:
ՀԱՐԴԻ— Դա ես չեմ եղել: Ցոփություն անել հենց աշխատասենյակում: Այն էլ՝ միանգամից երեքի հետ...
ՔիՄ— Ի՞նչ, ի՞նչ...
ՀԱՐԴԻ— Դու հավատո՞ւմ ես դրան:
ՔիՄ— Ա՛խ, ուրեմն դու նաև...
ՀԱՐԴԻ— Դե, ո՛չ, ասում եմ: Դա ես չեմ եղել: Հիմա քեզ կասեմ...
ՔիՄ— Հարկավոր չէ ոչինչ ասել, ցինի՛կ: Նախ՝ տանը, իմ աչքի առաջ, որը, պարզվում է, սրբագործություն է այն ամենի համեմատ, ինչ կատարվում է այստեղ: Այս մասին էլ նոր եմ իմանում:
ՀԱՐԴԻ— Նո՞ր ես իմանում... Թո՛ւ... *(Ինքն իրեն)* Հիմա՛ր: Ուզում էի ասել՝ սխալ ես իմանում...
ՔիՄ— Հետաքրքիր է, շատ հետաքրքիր... Գնալով նորանոր դեպքեր են բացահայտվում:
ՀԱՐԴԻ— Չես թողնում խոսել: Ասում եմ՝ դա ես չեմ եղել:
ՔիՄ— Ա՛խ, պարզվում է՝ դու նաև դու չես լինում: Ինչե՛ր եմ լսում: Եվ վաղուց է, որ փոխակերպվում ես նման ցինիկի:
ՀԱՐԴԻ— Ո՛չ, այնքան էլ վաղուց չէ: Չես թողնում խոսել:
ՔիՄ— Ու ո՞նց ես թաքցրել, հը՞:
ՀԱՐԴԻ— Ստիպված էի: Այդ մասին գիտեն ընդամենը երկու հոգի:
ՔիՄ— Ա՛խ, ընդամենը երկու հոգի: Եվ դա ամեն անգամ այդ երկուսի առաջ՞ ես անում:
ՀԱՐԴԻ— Ի՞նչը:
ՔիՄ— Իսկ ի՞նչ են անում երեք լրբերը, որոնց գումարվում է մի կնամոլ:
ՀԱՐԴԻ— Ախր, ես այդ մասին չեմ... Ես խոսում եմ իմ նման...
ՔիՄ— Գիտեմ, գիտեմ, դու դա լավ թաքցրել ես: Իսկ ես հիմարաբար կարծում էի, թե միայն մեկն է: Ես ապահարզան էի պահանջում մեկի համար, բայց պարզվում է, որ այստեղ կան նաև երեքը:
ՀԱՐԴԻ— Դե ո՛չ: Երեքը չեն: Նույնիսկ մեկին չէինք կարողանում գտնել, ո՞ր մնաց՝ երեքին: Ընդամենը մեկն է:
ՔիՄ— Խոստովանեցիր, ուրեմն: Վերջապե՛ս:
ՀԱՐԴԻ— Իսկ քեզ ո՞վ է ասել այդ մասին:
ՔիՄ— Այդ մասին վաղուց բոլորը գիտեն:
ՀԱՐԴԻ— *(Ջարմացած)* Չի կարող պատահել:
ՔիՄ— Ինչո՞ւ: Այդպես վարպետորե՞ն էիր քողարկում:
ՀԱՐԴԻ— Փորձում էինք:
ՔիՄ— Տակա՛նք: Տարիներ շարունակ պահել սիրուհի և սուրբ ձևանալ:
ՀԱՐԴԻ— Ի՞նչ...
ՔիՄ— Մարի Հադսո՛ն. ահա թե ինչ: Ահա քեզ փիսի՛կ, շնի՛կ, վագրի՛կ...

ՀԱՐԴԻ— Ի՞նչ է կատարվում, գրողը տանի: Ախր ես այդ մասին չեմ ...

ՔԻՄ— Վե՛րջ: Ավարտված է:

ՀԱՐԴԻ— Չես թողնում խոսել...

Ներս Են մտնում է մնան, Քեթրինը և Տիտոն:

ՏԻՏՈ— *(Չեռքը բարձրացնում է՝ որ «նռնակ» նետի) Պառկե՛լ...*

ՔԻՄ— Դու ուշացել ես, տղաս: Այստեղի պառկողները արդեն պառկել, վեր են կացել: *(Տիտոն, սովորության համաձայն, սկսում է կրակել: Պահից օգտվելով՝ Հարդին զանգում է):*

ՀԱՐԴԻ— Էդի... Էդի... Ո՛չ, մի՛ ուրախացիր. ինձ վրա չեն կրակում: Դա Տիտոն է: Վերադարձիր շտապ... Լսո՞ւմ ես... Այստեղ ուղարկիր Ջեքսոնին: Ասում եմ՝ անմիջապես իմ սենյակ ուղարկիր Ջեքսոնին:

ՔԵԹՐԻՆ— Ամեն անգամ այս կողմով անցնելիս հնարավոր չի լինում Տիտոյին զսպել, որ ներս չմտնի: Նա իրեն այստեղ գեներալի պես է զգում:

ԷՄՄԱ— *(Թափված թղթերը հավաքելով) Պատուհանը երևի բացել եք, հա՞, միստր: Ամեն ինչ էլի քամուն եք տվել:*

ՀԱՐԴԻ— Այո՛, այստեղից հենց մի պահ բացակայես, ամեն ինչ քամին տանում է...

ՏԻՏՈ— Այսօր ո՞ւմ եմ գնդակահարելու, հայրիկ:

ՀԱՐԴԻ— Ցուցակները արդեն պատրաստ են, տղաս: *(Էմմայի հավաքած փաստաթղթերը նրան տալով) Ահա՛, կարող ես բոլորին մեկ-մեկ կանգնեցնել պատի տակ:*

ՏԻՏՈ— *(Թռչկոտելով) Ուռա՛...*

ՀԱՐԴԻ— *(Էմմային) Ինչո՞ւ ներքին տեսացանքը չի աշխատում: Գոնե իմ սենյակ մտնողներին ես պիտի տեսնե՞մ, թե չէ...*

ԷՄՄԱ— Մոնիտորն է փչացել: Շուտով կսարքեն:

ՀԱՐԴԻ— Իսկ դո՞ւ ինչով ես զբաղված: Ով երբ ուզում, ներս է մտնում:

ՔԻՄ— Բացի ինձանից, Ջեկ, դրովհետև ես ամեն անգամ սպասում եմ:

ՀԱՐԴԻ— Մի՞թե:

ՔԻՄ— Իհարկե: Ես ինձ հո թույլ չե՞մ տա քեզ շփոթեցնել... Չէ՞ որ ժամանակ է պետք, որ հասցնեք փոխվե՛լ... Մտնել աշխատանքային ռիթմի մե՛ջ:

ՏԻՏՈ— *(Էմմային) Դե, առաջ ընկիր: Ես սկսելու եմ քեզնից: (Դռան մոտ երևում է Սառան):*

ՍԱՐԱ— Ինձնի՛ց սկսիր, Տիտո: Մի՛ խանգարիր խորհրդակցությունը... Ներեցեք, միստր Հարդի, ես հետո կգամ:

ԷՄՄԱ— Ո՛չ, ինձնից է սկսելու Տիտոն... Դե, գնացինք: Մեկ-երկու, մեկ-երկու... *(Սառան, Էմման և Տիտոն դուրս են գալիս: Լսվում է Տիտոյի ձայնը):*

ՏԻՏՈ— Չեռքներդ վե՛ր, ապուշներ...

ՔԵԹՐԻՆ— Չարաձճի տղա է Տիտոն:

Հետևի դռնից ներս է մտնում Ջեքսոնը և խոսում՝ առանց աշխատասեղանի կողմը նայելու:

ՋԵՔՍՈՆ— Օ՛, դուք այստեղ եք... *(Քիմը և Քեթրինը մնում են ապշած):* Ես էլ մտածում եմ, թե ինչու եմ ինձ շտապ կանչել... Ուրախ եմ, որ Դուք այստեղ եք, միսիս Քեթրին: *(Քիմին) Ինչ լավ է, որ դու էլ ես այստեղ, սիրելի՛ս: (Լսվում է Տիտոյի ավտոմատի ձայնը):* Եվ տղաս է այստեղ... *(Քիմի և Քեթրինի ապշած վիճակից սկսում է շփոթվել):* Կրակում է... Էլի կրակում է... *(Հետ է նայում և տեսնում Հարդիին):* Ա՛խ, Դուք էլ... Եք... այստեղ, միս... միս... միստր...

ՀԱՐԴԻ— Այո՛, ես էլ եմ այստեղ, Ջոնի: Դու ճիշտ ժամանակին եկար, եղբայր իմ:

ՔԵԹՐԻՆ— Եղբա՞յր:

ՔԻՄ— Ի՞նչ է սա նշանակում, Ջե՛կ:

ՀԱՐԴԻ— Սա այն է նշանակում, որ Ջոնին իմ եղբայրն է: Հարազատ եղբայրը: Մենք զույգ ենք...

ՔԻՄ— Ուրեմն...

ՀԱՐԴԻ— Այո՛:

ՔԻՄ— Բայց դու ինչո՞ւ ինձ մինչև հիմա չես ասել:

ՀԱՐԴԻ— Որովհետև ես նույնպես չեմ իմացել:

ՋԵՔՍՈՆ— Այո՛, մենք միայն վերջերս... Բոլորովին վերջերս... *(Իբր հուզվում է):*

ՔԻՄ— Ուրեմն նույն մորի՞ց:

ՀԱՐԴԻ— Այո՛:

ՔԵԹՐԻՆ— Եվ՝ զույգ:
 ՀԱՐԴԻ— Այո՛:
 ՔԻՄ— Եվ ինչպե՞ս է եղել, որ... միայն վերջերս...
 ՋԵՔՍՈՆ— Գիտե՞ս՝ բանն ինչ է, սիրելիս... Թո՛ւ... Ներեցեք... Ներեցեք, միսիս: Բանն այն է, որ ես ծնվել ու մեծացել եմ Վաշինգտոնում, իսկ միստր Հարդին... Թո՛ւ... Հարդին... Այսինքն՝ Ջեկը, Նյու Յորքում...
 ՔԻՄ— Նույն մորից... Ջույզ... Վաշինգտոնում... Նյու Յորքում...
 ՋԵՔՍՈՆ— Այո՛, միսիս... Նույն մորից, զույգ... Վաշինգ... (Մխայն զգալով) Վաշինգ... Յորքում...
 ՀԱՐԴԻ— Գիտե՞ս, սիրելիս, պատահում է այդպես...
 ՔԵԹՐԻՆ— Տեր Աստվա՛ծ, ինչ ասես, որ աշխարհում չի պատահում...
 ՀԱՐԴԻ— Այո՛, հետաքրքիր է, չէ՞: Եվ գիտե՞ք՝ դա ոնց է եղել: Երբ մայրս նստել է ինքնաթիռ, սկսել են ցավերը: Այդպես Վաշինգտոնի երկնքում՝ հենց ինքնաթիռի մեջ, ծնվել եմ ես, իսկ երբ ինքնաթիռն անցել է Նյու Յորքի երկնքով... Արդեն պարզ է, լույս աշխարհ է եկել Ջոնին:
 ՔԻՄ— Եվ հետո՞: Դու մեծացել ես Վաշինգտոնի երկնքում, Ջոնին՝ Նյու Յորքի՞:
 ՋԵՔՍՈՆ— Դե իհարկե՛ ոչ: Այնպես է եղել, որ ինքնաթիռը վթարային վայրէջք է կատարել Վաշինգտոնում...
 ՔԻՄ— Եվ քեզ թողնելով այնտեղ՝ Ջեկը իր մայրիկի հետ թռել է Նյու Յորք:
 ՔԵԹՐԻՆ— Այո՛, ինչ ասես աշխարհում չի լինում...
 ՀԱՐԴԻ— Պատկերացնո՞ւմ եք, Վաշինգտոնում կարծել են, թե ես մահացած եմ, և չեն իմացել, որ մայրս ունենալու է նաև երկրորդը: Քանի որ նրա ֆիզիկական վիճակն էլ վատ չի եղել, կրկին նստել է ինքնաթիռ և թռել:
 ՔԻՄ— Ապա պարզվել է, որ դու ողջ ես:
 ՀԱՐԴԻ— Այո՛:
 ՔԻՄ— Բայց մայրիկիդ այլևս չեն գտել:
 ՋԵՔՍՈՆ— Իսկ հետո մեկ այլ պատմություն է սկսվել: Իմանալով, որ ծննդատանը կա նման երեխա, բժիշկներին մեծ գումար են առաջարկել վաճառելու համար:
 ՔԻՄ— Եվ բժիշկները համաձայնել են:
 ՋԵՔՍՈՆ— Այո՛:
 ՔԵԹՐԻՆ— Տեր Աստվա՛ծ, ինչ ասես...
 ՔԻՄ— Ապա վթարի են ենթարկվել նրանք, ովքեր գնել են Ջեկին:
 ՋԵՔՍՈՆ— Ճիշտ է:
 ՔԻՄ— Եվ փրկվել է միայն Ջեկը:
 ՀԱՐԴԻ— Այո՛: Իսկ մնացածը արդեն գիտեք:
 ՔԵԹՐԻՆ— Տեր Աստվա՛ծ...
 ՔԻՄ— Եվ ի՞նչ ենք անելու հիմա:
 ՀԱՐԴԻ— Գիտե՞ս, սիրելիս, ես չեմ ուզում, որ այս մասին ուրիշներն իմանան: Այնքան անհավանական է այս ամենը, որ ուրիշները պարզապես չեն հավատա:
 ՔԻՄ— Ինչի՞նչ չեն հավատա:
 ՋԵՔՍՈՆ— Չեն հավատա, որ... այսպես նման ենք...

Ներս են մտնում Էմման, Սառան և Տիտոն: Էմման և Սառան խոսում են՝ իրար հերթ չտալով:

ԷՄՄԱ— Միստր Հարդի...
 ՍԱՐԱ— Միստր Հարդի... (Միանգամից քարանում են):
 ՏԻՏՈ— Հայրի՛կ... (Մե՛կ նայում է Հարդիին, մե՛կ Ջեքսոնին): Մայրիկ ես... բի՞ճ եմ...

*Լույսերը մարում են...
 Քիչ անց աջ և ձախ կողմերում վառվում է երկու լուսարձակ: Մի կողմում նստած է Հարդին, մյուսում՝ Սարին, որոնք իրար հետ կրկին խոսում են հեռախոսով:*

ՍԱՐԻ— Երեկ ի՛նչ հրաշալի օր էր, չէ՞, Ջեկ: Ի՛նչ խելահեղ օր:
 ՀԱՐԴԻ— Այո՛, երեկվա օրը ավելի քան խելահեղ էր...
 ՍԱՐԻ— Իսկ հիմա որտե՞ղ ես, վագրիկս: Դեռ չե՞ս հասնում:

ՀԱՐԴԻ— *(Ժամացույցին նայելով, ներքին բարկությամբ, որը զսպում է):* Ես հասած պիտի լինեի վաղո՛ւց, սիրելիս:

ՄԱՐԻ— Բա որտե՞ղ ես, շլդիկս: Ես արդեն ուզում եմ պատառոտել քեզ:

ՀԱՐԴԻ— Աստված գիտի, թե որտեղ եմ մնացել՝ խցանման մեջ, թե մի այլ գրողի ծոցում:

ՄԱՐԻ— Օ՛, ինչպե՛ս սիրում եմ քո հումորը:

ՀԱՐԴԻ— Ո՞վ կմտածեր, թե ամեն ինչ կդառնա հումոր:

ՄԱՐԻ— Դե՛, դե՛, շլդո՛, դու բողոքելու տեղ չունես: Շտապի՛ր, ես սպասում եմ...

ՀԱՐԴԻ— Շտապելը շտապում եմ, որովհետև այսօր պիտի հասցնեմ թռչել նաև Անգլիա: Ի դեպ՝ ես արդեն պիտի այնտեղ լինեի... Չգիտեմ, թե այս աշխարհում մարդ իր նման քանիսը պիտի ունենա, որ հասցնի ամեն տեղ լինել:

ՄԱՐԻ— Ձեկ, մի՞թե քեզ նման երկրորդը կարող է լինել: Տեսնեմ էլ, չեմ հավատա... Կկարծեմ, թե պատրանք է:

ՀԱՐԴԻ— Իսկ դու երբեք չե՞ս տեսնում պատրանքներ: Գիտե՞ս, ասում են՝ ինչ-որ համաճարակ է սկսվել: Ոմանք այդպիսի պատրանքներ են տեսնում: Մեկը նույնիսկ ցնորվել է... *(Լսվում է մյուս հեռախոսի զանգի ծայնը):*

ՄԱՐԻ— Դե, շուտ արա, ցլիկ: Շտապիր, քանի ես էլ պատրանքների մեջ չեմ ընկել: Սպասում եմ, սևո՛ւկս... *(Հեռախոսն անջատում է):*

ՀԱՐԴԻ— Գրողը տանի, ո՞ր կորավ այդ անիծյալ շրջմուխկը: *(Վերցնում է մյուս հեռախոսը):* Հարդին լսում է: *(Մյուս լուսարձակի տակ այժմ երևում է Սթիվը):*

Սթիվ— Միստր Հարդի... Միստր Հարդի, Ձեքսոնի համար փրկագին են ուզում:

ՀԱՐԴԻ— *(Անակնկալի եկած) Ի՞նչ... Ի՞նչ փրկագին:*

Սթիվ— Մի՞թե Ձեզ դեռ չեն ասել: Նրան առևանգել են: Հենց նոր զանգեցին ինձ և առաջարկեցին փրկագին: Հիսուն միլիոն:

ՀԱՐԴԻ— *(Բարկացած)* Եվ ո՛չ մի սենթ: Այդ խելառի համար մի սենթ էլ ես չեմ վճարի:

Սթիվ— Կսպանեն նրան, մի՛ստր:

ՀԱՐԴԻ— Ու լավ էլ... Դա արդեն իմ գործը չէ: Վե՛րջ: Ոչ մի սենթ: *(Հեռախոսն անջատում է):* Փրկագին... Հիսուն միլիոն... *(Կրկին լսվում է հեռախոսազանգ: Հարդին չի հիմանում ինչ անել: Ի վերջո՝ հեռախոսը վերցնում է և փորձում խոսել հանգիստ):* Այո՛, փիսիկս: *(Մյուս լուսարձակի տակ երևում է Քիմը):*

Քիմ— Վայրէջքը հաջո՞ղ էր, սիրելիս:

ՀԱՐԴԻ— Պատկերացրու, որ նույնիսկ չեմ զգացել, թե ինչպես եմ երկնքում ձախրել ու իջել: Կարծես ողջ ընթացքում նստած եմ եղել իմ սեղանի մոտ:

Քիմ— Եվ հիմա վայելում ես Ալբիոնի թարմ օդը:

ՀԱՐԴԻ— Վայելում եմ, սիրելիս: Այնպե՛ս հանգիստ է այստեղ:

Քիմ— Դե, գուդբայ, Ձեկ: Վերադարձիր շուտ: Ես արդեն կարոտում եմ քեզ:

ՀԱՐԴԻ— Գուդբայ, գուդբայ, սիրելի՛ս... *(Հեռախոսն անջատելուց հետո)* Բայց ես հիմա ստիպված եմ իմ երկվորյակի փոխարեն գնալ ժամադրության...

Նոր պատկեր:

Ջեքսոն, Մայքլ և Մարկ:

Ջեքսոն— Ես Հարդին չեմ:

ՄԱՅԷԼ— Իսկ ո՞վ ես: ՄԱԿ-ի քարտուղա՞րը, թե Հռոմի պապը:

Ջեքսոն— Ես Ջոնի Ջեքսոնն եմ: Նախկին շրջմուխկ: *(Անդրավարտիքի փողքը բարձրացնում է և ոտքը քորում է):*

ՄԱՐԿ— Վե՛րջ տուր հիմարություններիդ, Ձեկ: Հիսուն միլիոն և ոչ մի սենթ պակաս:

Ջեքսոն— Հավատա, սըր, երբեք մտքովս չի անցել, թե իմ կյանքը կարող է գնահատվել այդպես թանկ: *(Լսվում է Մայքլի բջջային հեռախոսի ծայնը):*

ՄԱՅԷԼ— Լսում եմ, միստր:

ԽՈՍԱԿԻՑ— Ի՞նչ ընթացքում է գործը, Մայքլ:

ՄԱՅԷԼ— Չի խոստովանում, սըր:

ԽՈՍԱԿԻՑ— Դու, ինչ է, խոստովանահա՞յր ես, ապո՛ւշ: Գումարը վճարո՞ւմ են, թե չէ:

ՄԱՅԷԼ— Չեն վճարում: Իսկ այս ապուշը չի խոստովանում, որ ինքը Հարդին է: Ես մտավախություն ունեմ, որ գործում դարձյալ կարող եմ ի հայտ գալ չնախատեսված հանգամանքներ:

ԽՈՍԱԿԻՑ— Վերջացրո՛ւ, Մայքլ: Այս անգամ արդեն դո՛ւք կնստեք արթոնին: Եթե դա անգամ Հարդին չէ, ուրեմն դարձրեք Հարդի, ինչպես կուզեք: Վե՛րջ: (*Հեռախոսն անջատում է*):

ՄԱՅԷԼ— Հասկացա՞ր, Ջեկ: Եթե դու անգամ Հարդին չես, մենք ստիպված ենք քեզ դարձնել Հարդի:

Ջեկ ՔՍՈՆ— Գրո՛ղը տանի, բոլորն ուզում են ինձ դարձնել Հարդի, բայց ես Ջեքսոնն եմ, Ջոնի Ջեքսոնը:

ՄԱՐԿ— Մտածիր, ուրեմն, Ջոնի: Խոստովանելու համար տալիս ենք քեզ ժա-մա-նակ...

Նոր պատկեր:

Ջեկ Հարդիի բնակարանը: Քիմ, Քեթրին և Ջեկ, որն ստիպված է խաղալ Ջոնիի «դերը»:

ՔիՄ— Պատկերացնո՞ւմ ես՝ ինչ թյուրիմացություն էր, Քեթրին: Կարծելով, թե Մարիի հետ սիրային կապի մեջ է Ջեկը, ես ներխուժեցի նրա սենյակ և պահանջեցի ապահարզան:

ՔԵԹՐԻՆ— Բայց պարզվեց, որ դա եղել է ոչ թե Ջեկը, այլ Ջոնին: (*Հարդիին*) Այդպես չէ՞, Ջոնի: (*Հարդիին, բավական շփոթված, գլխով հավանություն է տալիս*):

ՀԱՐԴԻ— Այո՛, միսիս:

ՔիՄ— Դե ո՛չ: Դա հետո պարզվեց:

ՔԵԹՐԻՆ— (*Կեղծ հետաքրքրությամբ*) Իսկ ինչ պարզվեց սկզբո՞ւմ:

ՔիՄ— Սկզբում պարզվեց, որ Ջեկի սենյակում եղել է գինարբուք, որի մասին ես չեմ իմացել: Ճիշտ եմ հիշում, չէ՞, Ջոնի:

ՀԱՐԴԻ— Այո՛, միսիս:

ՔիՄ— Եվ Ջոնին երեք կանանց հետ մի լավ զվարճացել է:

ՔԵԹՐԻՆ— Երեքի հե՞տ: Միաժամանակ:

ՔիՄ— Դե, Քեթրին, Ջոնիի համար ի՞նչ մեծ թիվ է երեքը... Բայց դու մի աչքով մի նայիր նաև Ջեկին: Նրա հետ մենք այնպիսի՝ օրեր էինք անցկացնում... Ես հարձակվում էի նրա վրա... (*Սկսում է ցույց տալ*): Այսպես բռնում էի և...

ՀԱՐԴԻ— (*Շփոթմունքից կարկանատ*) Ի՞նչ:

ՔիՄ— Քաշում էի...

ՀԱՐԴԻ— Ննջարա՞ն...

ՔիՄ— Դե ոչ, Ջոնի՛... Նախ տանում էի լոգարան... Դուշի տակ... ապա... վաննայի մեջ...

ՀԱՐԴԻ— (*Կարկանատ*) Ապա՞...

ՔիՄ— Ապա հատակի վրա... Բազմոցի...

ՀԱՐԴԻ— Ապա՞...

ՔիՄ— (*Վերև ցույց տալով*) Այնտեղ՝ առաստաղի...

ՀԱՐԴԻ— (*Այլևս չկարողանալով իրեն զսպել՝ սկսում է քայլել*): Ի՞նչ ես ասում...

ՔիՄ— (*Ժպտալով*) Իսկ դու, Քեթրին, հիշո՞ւմ ես, որ մի անգամ էլ...

ՀԱՐԴԻ— (*Անհամբերությունից*) Ի՞նչ..

ՔիՄ— (*Քեթրինին*) Մեզ հետ նաև քեզ...

ՔԵԹՐԻՆ— Օ՛, միսիս...

ՀԱՐԴԻ— Ի՞նչ... Ի՞նչ...

ՔԵԹՐԻՆ— Եվ միստրն այդ օրը հազիվ փրկվեց կաթվածից: (*Հարդին կատաղությամբ վերցնում է հեռախոսը և համար հավաքում*):

ՀԱՐԴԻ— Ալո... Սթիվ, հենց նրանք զանգե՛ն, միացրու ինձ հետ... Լսո՞ւմ ես... Անմիջապե՛ս: Ասա, որ համաձայն եմ վճարելու գումարը:

Իբր թե ավտոմեքենա վարելով՝ ներս է մտնում Տիտոն և մոտենում Քիմին:

ՏԻՏՈՆ— Մայրիկ, ինչի՞ց է, որ ուրիշները մի հայրիկ էլ չունեն, իսկ ես երկուսն ունեմ:

ՔիՄ— Այդպես երբեմն լինում է, տղաս: Նույնիսկ լինում է, որ նախ ունենում եմ երկուսը, իսկ հետո՝ ոչ մեկը... (*Տիտոն մոտենում է Հարդիին*):

ՏԻՏՈՆ— Հայրիկ, եթե ես ծնվել եմ երկու հայրիկից, ուրեմն դու էլ ծնվել ես երկու մայրիկի՞ց...

ՀԱՐԴԻ— Չէ՛, տղաս, երկու բիճ ծնելու համար մի մայրիկն էլ հերիք է...

Նոր պատկեր:

Ջեքսոն, Մայքլ և Մարկ:

Ջեքսոն— Լավ: Խոստովանում եմ: Ես Ջեյ Հարդին եմ:
ՄԱՐԿ— Վերջապե՛ս, Հարդի՛: Իսկ դու մեզ ուզում էիր դնել ապուշի տեղ:
ՄԱՅԷԼ— *(Անմիջապես զանգահարում է):* Խոստովանեց, միստր: Մեր ձեռքում իսկապես
Ջեյ Հարդին է:
ԽՈՍԱԿԻՑ— Իսկ գումա՞րը:
ՄԱՅԷԼ— Այդ մասին դեռ չենք խոսել:
ԽՈՍԱԿԻՑ— Տխմա՛ր... Նախ պետք էր այդ մասին խոսել:
ՄԱՅԷԼ— Արդեն սկսում ենք, սրր:
ԽՈՍԱԿԻՑ— Արագացրեք, Մայքլ, արագացրեք: *(Հեռախոսն անջատում է):*
ՄԱՐԿ— Դե ինչ, Հարդի: Ընդամենը հիսուն միլիոն:
Ջեքսոն— *(Գրպաններն ստուգելով)* Բայց ինձ մոտ այդքան չկա:
ՄԱՐԿ— Հարդի՛, մենք ուզում ենք, որ ամեն բան լինի խաղաղ, բարեկամաբար... *(Նրան
հեռախոս տալով)* Չէ՞ որ քո ընդամենը մի զանգն արժի հիսուն միլիոն:
Ջեքսոն— Մի՞թե:
ՄԱՅԷԼ— Այո՛, այո՛: Բավական է, որ դու ընդամենը զանգես:
Ջեքսոն— Իսկ ո՞ւր զանգեմ, որ իմ ծայնը գնահատեն այդքան թանկ:
ՄԱՐԿ— Հերի՛ք է բուր ձևանաս, Հարդի՛:
ՄԱՅԷԼ— Այդ դեպքում կզանգեմ ես: *(Ձանգում է):* Սթի՞վ:
ՍԹԻՎ— Այո՛, սրր:
ՄԱՅԷԼ— Իզուր են Ձեր խաղերը. նա խոստովանեց:
ՍԹԻՎ— Խոստովանե՞ց...
ՄԱՅԷԼ— Այո՛: Մեր ձեռքում Հարդին է: Իսկական Հարդին:
ՍԹԻՎ— *(Ջարմացած)* Մի՞թե:
ՄԱՅԷԼ— Եվ նա արժի հիսուն միլիոն:
ՍԹԻՎ— Սըր, ձեզ հետ այդ մասին ուզում է խոսել անձամբ ինքը՝ Ջեյ Հարդին:
ՄԱՅԷԼ— Ի՞նչ...
ՍԹԻՎ— Այո: Ես հիմա կմիացնեմ: *(Մի պահ տիրում է լռություն, ապա լսվում է Հարդիի
ծայնը):*
ՀԱՐԴԻ— Ալո... Խոսում է Հարդին...
ՄԱՅԷԼ— *(Ապշած)* Լսում եմ, միստր:
ՍԹԻՎ— Ես համաձայն եմ վճարել գումարը:
ՄԱՅԷԼ— Այդ դեպքում մենք անմիջապես ազատ կարծակե՞նք միստր... միստր... Հարդիին:
ՀԱՐԴԻ— Մի պայմանով միայն:
ՄԱՅԷԼ— Լսում եմ:
ՀԱՐԴԻ— Որ մինչև առավոտ նա այլևս չլինի:
ՄԱՅԷԼ— *(Ջարմացած)* Չլինի՞:
ՀԱՐԴԻ— Պարզ չե՞մ ասում, սրր:
Ջեքսոն— Ինչպե՞ս թե՛ չլինի: Դու ո՞ւմ հետ ես խոսում: Տո՛ւր ինձ հեռախոսը: *(Հեռախոսը
վերցնում է):* Ո՞ւմ հետ պատիվ ունեմ, միստր...
ՀԱՐԴԻ— Խոսում է Հարդին, ապո՛ւշ:
Ջեքսոն— Ջեյ Հարդին, այնպես չէ՞: *(Լսվում է Մարկի հեռախոսի ծայնը, և մի պահ
զուգահեռ խոսում է նաև նա):*
ՄԱՐԿ— Գործում դարձյալ ի հայտ եկան անսպասելի հանգամանքներ, սրր: Մեր ձեռքում է
հիմա երկու Հարդի:
ԽՈՍԱԿԻՑ— Իսկ գումա՞րը:
ՄԱՐԿ— Նրանք իրար հետ հիմա այդ մասին են խոսում...
ՀԱՐԴԻ— Ես տալիս եմ, այո՛, հիսուն միլիոն:
Ջեքսոն— *(Մայքլին և Մարկին)* Փչում է: Ձեզ փորձում է գցել ծուղակը: Իրականում
իսկական Հարդին ո՛չ ես եմ, ո՛չ նա: Իսկական Հարդին թռել է Անգլիա...
ՄԱՐԿ— Ի՞նչ...
Ջեքսոն— *(Կրկին՝ հեռախոսով)* Լսո՞ւմ ես, Հար... Հար... Մի խոսքով՝ եթե դու Հարդին ես,
իսկ ո՞վ է Անգլիայում:
ՀԱՐԴԻ— Ես քեզ հետ այդ մասին դեռ կխոսեմ, Ջոնի, հանձարեղ սրիկա... *(Հեռախոսն
անջատում է):*

ԶԵՔՍՈՆ— Ահա՛, լսեցի՞ք, որ ես Ջոնին եմ, Ջոնի Ջեքսոնը: Իսկ դուք զանգահարեք ընկերություն, խնդրեմ, հարցրեք, թե որտեղ է Ջեկ Հարդին:

ՄԱՅԶԼ— *(Ձանգահարում է):* Ես ուզում եմ խոսել միստր Ջեկ Հարդիի հետ, միսիս:

ԽՈՍԱԿԻՑ— Ջեկ Հարդին, միստր, մեկնել է Անգլիա:

ԶԵՔՍՈՆ— Ահա՛, ասում էի, չէ՞: *(Լսվում է Մարկի հեռախոսի ձայնը):*

ՄԱՐԿ— Այո, միստր:

ԽՈՍԱԿԻՑ— Ինչո՞ւ անջատեցիր հեռախոսը: Ի՞նչ որոշեցին ձեր հարդիները:

ՄԱՐԿ— Գործը կրկին ունեցավ անակնկալ շրջադարձ, սըր... Պարզվեց, որ իսկական Հարդին մեկնել է Անգլիա...

Նոր պատկեր:

Ջեկ Հարդիի աշխատասենյակը: Էմման, Հարդիի սեղանին փաստաթղթեր դնելով, ուզում է դուրս գալ և այդ պահին բարկացած ներս է մտնում Հարդին:

ԷՄՄԱ— *(Անակնկալի գալով) Ա՛...*

ՀԱՐԴԻ— *(Խոսքը հեռակա կարգով ուղղելով Ջեքսոնին)* Ապո՛ւշ... Ես հիմա քեզ ցույց կտամ Հարդի:

ԷՄՄԱ— Միստր... Դուք ո՞վ եք: Միստր...

ՀԱՐԴԻ— Ինչպե՞ս թե՛ ով եմ... Չե՞ս տեսնում, որ ես Հարդին եմ: Ջեկ Հարդին:

ԷՄՄԱ— *(Ձեռքը աչքերի առաջ շարժում է այնպես, կարծես ուզում է պատրանքը ցրել):* Ջեկ Հարդին, միստր, մեկնել է Անգլիա... *(Հետին դռնից այնպես, ինչպես Հարդին, ներս է մտնում Ջեքսոնը):*

ԶԵՔՍՈՆ— *(Էմմայի և Հարդիի կողմը չնայելով)* Հիմա՛ր... Ես քեզ ցույց կտամ, թե ինչ է նշանակում ներկայանալ որպես Հարդի...

ԷՄՄԱ— *(Գրեթե ձայնով) Ա՛...* *(Կրկին պատրանքը ցրելու շարժում է անում: Ջեքսոնը, իբր զարմացած, այնպես է նայում Հարդիին, կարծես առաջին անգամ է տեսնում):*

ԶԵՔՍՈՆ— Դու ո՞վ ես, միստր:

ՀԱՐԴԻ— Վե՛րջ, Ջոնի, խաղը ավարտվեց:

ԶԵՔՍՈՆ— Ջոնի՞... Ես Հարդին եմ: Ջեկ Հարդին...

ԷՄՄԱ— *(Մեքենաբար նույնը կրկնում է):* Ջեկ Հարդին, միստր, մեկնել է Անգլիա... *(Ներս է գալիս Սառան: Ձայնը լսվում է դեռևս դռան հետևից):*

ՍԱՌԱ— Էմմա՛... Էմմա՛... *(Նկատում է Ջեքսոնին ու Հարդիին և զարմանքից ճչում):* Ա՛... *(Հարդիին)* Դուք ուրեմն վերադարձե՞լ եք, միստր Հարդի... *(Ջեքսոնին)* Եվ Դո՞ւք եք վերադարձել... միստր... նույնպես... Հարդի...

ՀԱՐԴԻ— Վե՛րջ տուր կատակիդ, Ջոնի՛: Խոստովանիր, որ դու Ջեքսոնն ես:

ԶԵՔՍՈՆ— Դա լինելիք բան չէ, որովհետև ես դեռ երեկ եմ խոստովանել, որ Հարդին եմ: Եթե այսպես գնա, ստիպված կլինեմ խոստովանելու, որ միաժամանակ նաև Հոնոփ պապն եմ: *(Բաց դռնից լսվում է Մարիի ձայնը):*

ՄԱՐԻ— Աու՛... Փիսի՛կս... *(Ներս մտնելով՝ ճչում է):* Ա՛... *(Հարդիին, ապշած մարդու տոնայնությամբ)* Շլի֛կս... *(Ջեքսոնին)* Վագրի՛ կս... *(Լսվում է հեռախոսազանգ, Էմման վերցնում է լսափողը):*

ԷՄՄԱ— Այո... Այո՛... Այո՛, միսիս... Ի՛նչ-ի՛նչ... Ջեկ Հարդի՞ն... Օ՛, Տեր Աստված... *(Լսափողը դնում է: Բոլորը լարված նայում են նրան):* Ջեկ Հարդին քիչ առաջ իր ողջ ունեցվածքն ու խնայողությունը նվիրել է ինչ-որ Ջեքսոնի ու եղել ինքնասպան...

ԲՈԼՈՐԸ՝ ՄԻԱՍԻՆ— Ա՛...

ԶԵՔՍՈՆ— *(Անմիջապես)* Խոստովանում եմ, ես Ջեքսոնն եմ... *(Հարդին զայրույթից ու շփոթմունքից չի իմանում ինչ անել):*

ՀԱՐԴԻ— Ասում է՛ ես Ջեքսոնն եմ: Իսկ ո՞վ եմ այդ դեպքում ես:

ԶԵՔՍՈՆ— Ջեկ Հարդին, միստր: Դու Ջեկ Հարդին ես:

ՀԱՐԴԻ— Դու, ի՞նչ է, չլսեցիր, որ Ջեկ Հարդին մեկնել է Անգլիա...

ՄԱՐԻ— Ու եղել ինքնասպան:

ԶԵՔՍՈՆ— Իսկապե՛ս... Ո՞վ ես այդ դեպքում դու:

ՍԱՌԱ— Ես հասկացա: *(Բոլորը նայում են նրան):* Այս միստրը պարզապես Հարդիի ուրվականն է...

ՀԱՐԴԻ— Դե ո՛չ: *(Իրենից անկախ)* Ես հենց Հարդին եմ...

ԶԵՔՍՈՆ— Ի՞նչ... Բռնվեցի՞ր, Հարդի՛:

ԷՄՄԱ— *(Դեռևս ուշքի չգալով)* Հարդին մեկնել է Անգլիա...
ՄԱՐԻ— Եվ ինքնասպան եղել...
ԶԵՔՍՈՆ— Այդ դեպքում ո՞վ է այս միստրը:
ՍԱՌԱ— *(Նույն ձևով)* Ես կարծես կռահում եմ: Այս միստրը պարզապես *(ցույց է տալիս Ջեքսոնին)* այս միստրի նմանակն է:
ԶԵՔՍՈՆ— Ի՞նչ նմանակը... *(Իրենից անկախ)* Բայց մինչև հիմա ասում էին, թե ես եմ նրա նման... նման...
ՀԱՐԴԻ— Ա՛... Բռնվեցի՞ր:
ՄԱՐԻ— Այս ի՞նչ շիլաշփոթ է, Աստված իմ: *(Հեռախոսը կրկին զանգում է: Էմման վերցնում է լսափողը):*
ԷՄՄԱ— Այո... Այո... Ի՞նչ... Սխալմո՞ւնք է... Դա եղել է ուրի՞շ Հարդի... *(Լսափողը դնում է):*
Պարզվում է, որ եղել է նաև չորրորդը...
ԶԵՔՍՈՆ— Գորող տանի, այս քանի՞ նմանակ եմ ունեցել ես:

Ներս եմ մտնում Քիմ Հարդին և Քեթրինը:

ՔԻՄ— *(Մոտենալով Ջեքսոնին)* Դու արդեն վերադարձե՞լ ես, Ջեյ: Հաջո՞ղ էր վայրէջքը:
ՀԱՐԴԻ— *(Էմմայի նման պատրանքը ցրելու շարժում է անում):* Քի՞մ... Այս ի՞նչ է կատարվում... Ջեյը ես եմ:
ՔԵԹՐԻՆ— Դո՞ւ... Դե ո՞չ, դու Ջոնին ես:
ՔԻՄ— Պարզապես նա այնքա՞ն է քեզ նման, որ շփոթում ես... *(Հարդին կրկին ցնորվածի պես պատրանքը ցրելու շարժում է անում):*
ՔԵԹՐԻՆ— Դու Ջոնին ես, իսկ նա՝ քո եղբայր Ջեյը: Դու Ջեքսոնն ես, իսկ նա՝ Հարդին, բանկերի ընկերության նախագահը:
ԷՄՄԱ— Աստվա՛ծ իմ, այս որքա՞ն նման եմ:
ՔԻՄ— Դե իհարկե պիտի լինեն նման: Չէ՞ որ զույգ եմ:
ՄԱՐԻ— Ուրեմն ծնվել են նույն մորի՞ց:
ՔԵԹՐԻՆ— Ոչ միայն նույն մորից, այլև նույն օրը, միասին: Մեկը՝ Վաշինգտոնում, մեկը՝ Նյու Յորքում... Դա այնքա՞ն հետաքրքիր պատմություն է:
ՔԻՄ— Երբ Ջեյի մայրը նստում է ինքնաթիռ, հենց երկնքում՝ ինքնաթիռի մեջ, սկսվում են ցավերը...
ՀԱՐԴԻ— Վերջացրե՛ք...
ՍԱՌԱ— *(Հարդիին)* Միստր Ջեքսոն, Ձեզ վա՞տ եք զգում:
ԷՄՄԱ— Ձեզ բա՞ն պատահեց...
ՀԱՐԴԻ— Ես Հարդին եմ...
ՄԱՐԻ— *(Հարդիին նայելով)* Ա՛...
ՔԻՄ— Ի՞նչ...
ՄԱՐԻ— Այո, պատահեց... *(Կեղծ խորհրդավորությամբ)* Միստր Ջեքսոնը խելագարվե՛ց...
ՀԱՐԴԻ— Ի՞նչ...
ՔԵԹՐԻՆ— Ոչինչ, միստր Ջեքսոն, ոչինչ, այդպես լինում է: Դա բուժելի է: Հիմա բժիշկ կկանչենք... *(Ջեքսոնը զանգում է):*
ԶԵՔՍՈՆ— Խոսում է Հարդին: Բանկերի ընկերության նախագահ Ջեյ Հարդին:
ՀԱՐԴԻ— Վերջացրե՛ք...
ԶԵՔՍՈՆ— Մենք հիվանդ ունենք, միստր: Հարկավոր է տեղափոխել Ձեզ մոտ՝ հոգեբուժարան... Խիստ տարօրինակ... Նա կարծում է, թե ինքը ես եմ... Ուզում է, որ իրենից Հարդի սարքենք... Սպասում ենք, միստր...
ՔԻՄ— Ի՞նչ... Ուրեմն քեզ տանելո՞ւ են, Ջոնի:
ՄԱՐԻ— Ո՛չ... Եթե նրան տանեն, ես... Կխելագարվեմ: Ախր ես արդեն այնպե՛ս էի սովոր ունենալ երկու Հարդի...
ԲՈՒՈՐԸ՝ ՄԻԱՍԻՆ— Ի՞նչ...
ՔԵԹՐԻՆ— Ուրեմն դու... իմացե՞լ ես այդ մասին:
ՀԱՐԴԻ— Դադարեցրե՛ք...
ՄԱՐԻ— *(Հանցանքում բռնվածի մեղավորությամբ)* Դե... Այն օրը, երբ Սառան ասաց, որ Հարդին այստեղ իր հետ...
ՔԻՄ— Ուրեմն՝ նաև Սառա՞ն...

ՍԱՌԱ— Գիտե՞ք, ես չէի ուզում ինքս բացել գաղտնիքը... Իսկ միստր Ջեքսոնն այնպես հաճելի...

ԷՄՄԱ— Ի՞նչ... Ուրեմն Ջեքսոնը ոչ միան ինձ... *(Բոլորը նայում են էմմային, որը շփոթվում է):* Դե... Երբ իմացա, որ Քեթրինը... Նա... տանը...

ՍԱՐԻ— *(Քեթրինին նայելով)* Քեթրի՞ն...

ՔԵԹՐԻՆ— Ես... Միսիս Հարդին... միասին... նույն օրը: Իսկ նա՛ Ջեքսոնը, այնպե՛ս տարբերվում էր հարդիից..

ՋԵՔՍՈՆ— Ի՞նչ... Ուրեմն դուք բոլորդ... *(Նույնպես ցնորվածի պես)* Ա՛... *(Կրկին զանգում է):* Միստր... Շտապեք, միստր: Այստեղ ամեն վայրկյան մեկը կարող է խելագարվել...

Ինչպես միշտ, ավտոմատը ձեռքին ներս է մտնում Տիտոն ու միանգամից բղավում:

ՏԻՏՈՒ— Ձեռքներդ վե՛ր...

Տիրում է լռություն: Բոլորը ձեռքները դանդաղ բարձրացնում են...

www.gurgenmikayelyan.info: